2026, ՓԵՏՐՎԱՐ Ա, ԹԻՎ 3 (695)

Էջմիածին

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տոնախմբվեց Տյառնընդառաջը

Փետրվարի 14-ին՝ 40-օրյա մանուկ Հիսուսի տաճարին ընծայման տոնին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Միածնաէջ Մայր Տաճարում մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ:



Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հայորդյաց տների հոգևոր տեսուչ Հոգեշնորհ Տ. Հարություն վարդապետ Կիրակոսյանը:

Իր քարոզում Հայր Սուրբն անդրադարձ կատարեց տոնի խորհրդին՝ մասնավորաբար նշելով. «Տյառնընդառաջի խորհուրդը Աստծուն սպասելու, Նրան մոտենալու և Նրա ներկայությունն ապրելու մեջ է, այն հրավեր է յուրաքանչյուրիս՝ Տիրոջն ընդառաջ գնալու, մեր հավատքի մեջ զորանալու, անսահման հույսի և սիրո մեջ ապրելու»:

Այնուհետև անդրադառնալով տոնի ավետարանական պատմությանը՝ Հարություն վարդապետը նշեց. «Աննկարագրելի ու անպատմելի են Սիմեոն ծերունու երկարամյա սպասումն ու Հիսուսին իր գիրկն առնելու նրա անկողոպտելի ուրախությունը: Բերկրանք և ցնծություն, որ յուրաքանչյուրս ապրում ենք, երբ բախտ ենք ունենում հպվելու Տիրոջը՝ մեր երկրային կյանքն իմաստավորելով միայն ու միայն Աստծով»:

Իր քարոզում Հայր Հարությունը, դիմելով ներկաներին, պատգամեց՝ առանց վարանելու և երկմտելու գնալ Տիրոջն ընդառաջ, որպեսզի Աստված մեզ գթա ու արժանացնի այն անհուն խնդությանը և նույն բերկրանքին, որն ապրեց Սիմեոն ծերունին Մանկանը գրկելիս:

Ապա Հարություն վարդապետը, դիմելով սրբազան արարողությանը ներկա նորապսակներին, հորդորեց, որ իրենց համատեղ կյանքն ապրեն Աստծու սիրո փնտրտուքով, որովհետև Բարձրյալի սերն ու Նրա ներկայությունն են, որ սրբագործելու են իրենց ընտանեկան հարկը:

Հավարտ Սուրբ Պատարագի, հանդիսապետությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Նաջարյանի, կատարվեց նորապսակ զույգերի օրհնության կարգ:

Նույն օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսը Վեհարանում ընդունեց Մայր Աթոռի տարբեր կառույցներում սպասավորող նորապսակ սարկավագներին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանի:

Տոնի առիթով Հայոց Հովվապետը, իր հայրական օրհնությունն ու շնորհավորանքները բերելով նորապսակ զույգերին, հորդորեց վերջիններիս ապրել սիրով, լինել միմյանց զորակից և չընկրկել դժվարությունների առաջ: Նորին Սրբությունը մաղթեց նաև, որ Տիրոջ լույսն ու ջերմությունը մշտապես ներկա լինեն իրենց նորակազմ ընտանիքներում, և ապրեն առողջ ու երջանիկ կյանքով:

Վերջում Վեհափառ Հայրապետը «Պահպանիչ» աղոթքով օրհնեց նորապսակ զույգերին և ընծայեց նվերներ:

Սուրբ Պատարագ և շնորհաբաշխություն Սուրբ Ղևոնդյանց քահանաների տոնի առիթով



Փետրվարի 10-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց Սուրբ Ղևոնդյանց քահանաների հիշատակը: Այս առիթով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ Միածնաէջ Մայր Տաճարում մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ:

Սրբազան արարողությանը ներկա էին թեմերում և եկեղեցական կառույցներում սպասավորող 217 եկեղեցականներ, թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ և բազմաթիվ հավատավոր հայորդիներ:

Պատարագիչն էր Մասյացոտնի թեմից Տ. Եզնիկ քահանա Մարդիրյանը:

Իր քարոզում պատարագիչ Տեր Հայրը, անդրադառնալով օրվա խորհրդին, ընդգծեց. «Սուրբ Ղևոնդյանց սխրանքը լոկ պատմական իրողություն չէ, այլ աննահանջ հավատքով ապրելու հարատև պատգամ: Այն կոչ է՝ այսօրվա փոփոխական աշխարհում մնալու նույն հոգևոր պայքարի մեջ և մեր կյանքն աներեր կերպով խարսխելու քրիստոնեական արժեքների վրա: ➥ էջ 2

Սուրբ Վարդանանց տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում



Փետրվարի 12-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ոգեկոչեց Սուրբ Վարդանանց զորավարների և 1036 վկաների հիշատակը:

Այս առիթով Միածնաէջ Մայր Տաճարում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ: Պատարագիչն էր Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսուչ Հոգեշնորհ Տ. Հուսիկ աբեղա Սմբատյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ և բազմաթիվ հավատավոր հայորդիներ:

Պատարագիչ Հայր Սուրբն իր քարոզում անդրադարձավ տոնի խորհրդին՝ մասնավորապես նշելով. «Սրբոց Վարդանանց տոնը այն եզակի օրերից է, երբ պատմությունն ու հավատքը միաձուլվում են մեկ վկայության մեջ: Պարսից թագավորը փորձում էր ջնջել հայ ժողովրդի հոգևոր ինքնությունը՝ ստիպելով հրաժարվել Սուրբ խաչից և Սուրբ Ավետարանից: Բայց հայ ժողովուրդը հասկանում էր, որ եթե կորցնի հավատքը, կկորցնի նաև իր ինքնությունը, իր կոչումը և իր ապագան: Այդ պատճառով Վարդանանց պայքարի կարևոր իմաստը ամփոփվում է հայտնի խոսքի մեջ՝ «Մահ իմացյալ՝ անմահություն»»:

Ապա Հոգեշնորհ Հայր Սուրբը, դիմելով ներկաներին, հորդորեց Սրբոց Վարդանանց օրինակով ուժ ստանալ, ամուր կառչել մեր հավատքին, սիրել հայրենիքն ու Եկեղեցին՝ հավատարիմ մնալով Աստծուն բոլոր փորձությունների մեջ: «Սուրբ Վարդան Մամիկոնյանի և Սրբոց Վարդանանց տոնը թող մեզ համար լինի ոչ միայն պատմական հիշատակ, այլև կենդանի կանչ՝ ապրելու հավատքով լեցուն կյանք և վերանորոգելու մեր ուխտը Աստծո, հայրենիքի և միմյանց հանդեպ»,– հավելեց Հուսիկ աբեղան:

Հայր Սուրբը նաև միաբանության և ներկա հավատացյալ ժողովրդի անունից շնորհավորեց Վեհափառ Հայրապետին անվանակոչության օրվա կապակցությամբ:

Սուրբ Պատարագի ավարտին Իջման Սուրբ Սեղանի առջև, հանդիսապետությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Նաջարյանի, կատարվեց Հայրապետական մաղթանք:

Եկեղեցականաց դասն ու հավատացյալ ժողովուրդն աղոթք բարձրացրին առ Աստված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անսասանության, հավերժ պայծառության և Նորին Սրբության կենաց արևշատության ու արդյունաշատ հովվապետության համար:

Սուրբ Պատարագ և շնորհաբաշխություն Սուրբ Ղևոնդյանց քահանաների տոնի առիթով





↩ էջ 1

Խնկելի սրբերի օրինակը մեզ սովորեցնում է, որ հավատը ոչ միայն դավանանք է, այլև քաջություն՝ դիմակայելու ժամանակի փորձություններին և հավատարիմ մնալու հայրենյաց ավանդներին ու Սուրբ Էջմիածնի ուխտին»:

Քարոզի ավարտին Տեր Եզնիկը հայցեց, որ Սուրբ Ղևոնդյանց բարեխոսությամբ Տերը զորացնի Սուրբ Էջմիածնի ուխտապահ միաբանությանը, հոգևորականաց դասին և աստվածասեր ու բարեպաշտ ժողովրդին:

Սուրբ Պատարագի ավարտին Գևորգյան հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ քահանաների պարգևաբաշխություն: Ողջույնի խոսքով հանդես եկավ քահանայից հավաքի կազմակերպիչ հանձնախմբի պատասխանատու Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը:

Այնուհետև տեղի ունեցավ ավանդական շնորհաբաշխությունը: Ի գնահատություն Հայոց Եկեղեցու անդաստանում նվիրյալ և արդյունավոր հովվական ծառայության՝ մի շարք եկեղեցականների շնորհվեց ավագ քահանայության պատիվ, ծաղկյա փիլոն և լանջախաչ կրելու իրավունք:

Ավագ քահանայության պատվի արժանացան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ Տ. Եսայի քահանա Արթեցյանը, Բուլղարիայի հայոց թեմից՝ Տ. Դանիել քահանա Գարաճյանը:

Ծաղկյա փիլոն կրելու իրավունք շնորհվեց Մայր Աթոռից՝ Տ. Հովել քահանա Գամաղելյանին, Տ. Արարատ քահանա Պողոսյանին, Տ. Համբարձում քահանա Դանիելյանին, Տ. Մարկոս քահանա Մանգասարյանին, Տ. Ենովք քահանա Եսայանին, Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հոգևոր սպասավոր Տ. Առնակ քահանա Հարությունյանին, Մասյացոտնի թեմից՝ Տ. Գրիգոր քահանա Հովհաննիսյանին, Արթիկի թեմից՝ Տ. Եղիշե քահանա Նազարյանին, Տ. Վիգեն քահանա Ղազարյանին, Տավուշի թեմից՝ Տ. Շավարշ քահանա Սիմոնյանին, Տ. Արամ քահանա Միրզոյանին, Շիրակի թեմից՝ Տ. Տաթև քահանա Մարուքյանին, Գեղարքունյաց թեմից՝ Տ. Մեսրոպ քահանա Երիցյանին, Վիրահայոց թեմից՝ Տ. Վիրապ քահանա Ղազարյանին, Տ. Արմաշ քահանա Պողոսյանին, Տ. Թադեոս քահանա Տեր-Մկրտչյանին, Տ. Արարատ քահանա Գումբալյանին, Կրասնոդարի և Հյուսիսային Կովկասի հայոց թեմից՝ Տ. Խաչատուր քահանա Եղիազարովին, Տ. Գյուտ քահանա Ղահրամանյանին, Ռումինիայի հայոց թեմից՝ Տ. Գրիգոր քահանա Հոլկային, Տ. Օշական քահանա Խաչատրյանին, Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմից՝ Տ. Ավետիս քահանա Համբարձումյանին, Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմից՝ Տ. Անանիա քահանա Բաբայանին, Տ. Մաշտոց քահանա Հակոբյանին, Տ. Սեբեոս քահանա Ղալաչյանին, Տ. Առաքել քահանա Ամիրյանին, Տ. Մարկոս քահանա Սարգսյանին, Տ. Աշոտ քահանա Ղազարյանին, Տ. Վիգեն քահանա Մանուկյանին, Շվեյցարիայի հայոց թեմից՝ Տ. Շնորհք քահանա Չեքիջյանին:

Քահանայական լանջախաչ կրելու իրավունքի արժանացան Մայր Աթոռից՝ Տ. Վահրամ քահանա Սարգսյանը, Տավուշի թեմից՝ Տ. Արտակ քահանա Միրզոյանը, Տ. Բարսեղ քահանա Մկրտչյանը, Տ. Կորյուն քահանա Պապիկյանը, Տ. Արամ քահանա Բաղումյանը, Տ. Եղիա քահանա Փահլևանյանը, Շիրակի թեմից՝ Տ. Կորյուն քահանա Մաթևոսյանը, Տ. Սարգիս քահանա Սարդարյանը, Մասյացոտնի թեմից՝ Տ. Ղևոնդ քահանա Ղևոնդյանը, Արգենտինայի հայոց թեմից՝ Տ. Մեսրոպ քահանա Նազարյանը, ԱՄՆ հայոց արևելյան թեմից՝ Տ. Հարություն քահանա Սապունջյանը, Ռումինիայի հայոց թեմից՝ Տ. Եզնիկ քահանա Թորգոմյանը, Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Հայոց թեմից՝ Տ. Երեմիա քահանա Վարդանյանը:

Պարգևաբաշխության ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու հայրապետական պատգամը հղեց ներկա եկեղեցականներին՝ անդրադառնալով առ Քրիստոս հավատի վկաներ Սրբոց Ղևոնդյանց հայրենասիրության, խիզախության ու անձնազոհության մշտապայծառ օրինակին:

«Վարդանանց պատերազմը ոչ միայն ռազմական դիմադրություն էր, այլև հոգևոր մարտ, որը, «վասն հաւատոյ և վասն հայրենեաց» նշանաբանով, դարձավ հզոր պայքար հանուն մեր ինքնության, մեր հավատի և հանուն անկախ ու ազատ կյանքի: Պատահական չէ, որ հերոսական այդ պայքարը մեծ ազդեցություն է թողել մեր ժողովրդի վրա: Դարեր շարունակ ազգիս զավակները Սրբոց Ղևոնդյանց ու Վարդանանց խիզախության վառ օրինակով են ոգեշնչվել ու մաքառել և փորձություններին արիությամբ դիմակայել: Հիրավի, Սրբոց Ղևոնդյանց և Վարդանանց նվիրական տոները Աստծուն, քրիստոնեական սրբություններին ու արժեքներին մեր ժողովրդի հավատարմության նշանավորումն են և մեր հոգևոր ու ազգային ինքնության վկայությունը:

Սուրբ Ղևոնդյանք ու Վարդանանք մեզ պատգամում են չերկնչել, քանզի նեղություններն ու դժվարությունները ժամանակավոր են, իսկ հավատքի ուժը՝ անպարտելի: Այս տոները ուսուցանում են ազգային շահերը սեփականից վեր դասել, հոգևորը, բարոյականն ու առաքինին նյութապաշտությունից գերադասել»,— նշեց Նորին Սրբությունը՝ հավելելով, որ Սուրբ Ղևոնդյանք և Վարդանանք ցույց են տալիս՝ բռնացումը Եկեղեցու և նախնյաց սրբազան ժառանգության վրա միշտ ընկրկելու և ձախողվելու է՝ արժանանալով հոգևորականաց և ազգիս բարեպաշտ զավակների հզոր դիմադրությանը:

«Մեր օրերում լրջագույն հիմնախնդիրների առջև է գտնվում մեր ժողովուրդը, տարատեսակ բռնաճնշումների է ենթարկվում և հարձակումներ դիմագրավում մեր Սուրբ Եկեղեցին: Վարչապետի ձեռնարկած հակաեկեղեցական արշավն արդեն բացահայտ է: Խոչընդոտվում է Եկեղեցու առաքելությունը, և լրջագույն վնաս հասցվում մեր ժողովրդի հոգևոր-եկեղեցական կյանքին: Դատական ատյաններում, ՀՀ Սահմանադրության և օրենքների բացահայտ խախտումներով, հակաօրինական ու անարդար քայլերով իշխանությունը պետական լծակների չարաշահմամբ միջամտում է ներեկեղեցական կյանքին: Հոգևորականներ՝ սարկավագներից մինչև եպիսկոպոս, ենթարկվում են հետապնդումների ու պարտադրանքների»,— ընդգծեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ հաստատելով, որ Եկեղեցին բոլորիս հոգևոր տունն է, որին ուղղված հարվածներին դիմակայելը, Եկեղեցու ինքնավարությունը պաշտպանելը ամենքի հավաքական պարտականությունն են և պատասխանատվությունն Աստծո, հայրենիքի ու գալիք սերունդների առջև:

Դիմելով ներկա հոգևոր հայրերին՝ Նորին Սրբությունը պատգամեց. «Որպես Աստծո ծառաներ և մեր ժողովրդի հոգևոր սպասավորներ՝ սրբազան մեր պարտքն է ամուր պահել մեր Սուրբ Եկեղեցին՝ իբրև «կենդանի Աստծու Եկեղեցի, սյուն և հաստատություն ճշմարտության»՝ համաձայն առաքելական խոսքի (Ա Տիմ. 3.15): Միասնաբար դիմակայենք ազգային ու եկեղեցական անդաստանում երկպառակություն ու թշնամանք սերմանելու չարամիտ քայլերին՝ պաշտպանը լինելով արդարության ու ճշմարտության: Ղևոնդյանց ու Վարդանանց ոգին ու ազգավիրումը դարձնենք աշխարհասփյուռ հայության առաջնորդող ուժ՝ հավատքի ամրությամբ, եղբայրասիրությամբ և ազգային միասնությամբ ճանապարհ հարթելով դեպի հոգևոր զարթոնք ու համերաշխ ոգով մեր ժողովրդի բարօր ապագայի կերտում»:

Վերջում շնորհավորելով եկեղեցականներին Սրբոց Ղևոնդյանց տոնի առիթով, ինչպես և պարգևի արժանացած քահանաներին՝ Հայոց Հայրապետը հայցեց, որ Բարձրյալն Աստված Սրբոց Ղևոնդյանց և Վարդանանց բարեխոսությամբ խաղաղություն շնորհի համայն աշխարհին, ամրապնդի հոգևոր դասի վճռականությունը՝ ծառայելու և գործելու ի սեր և ի պաշտպանություն հայրենի պետության ու համազգային շահերի և ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու:

Հավաքը եզրափակվեց Հայոց Հովվապետի «Պահպանիչ» աղոթքով:

Հայտարարություն
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարված քահանայից հավաքի մասնակիցների



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրական օրհնությամբ, Սրբոց Ղևոնդյանց քահանաների նվիրական տոնի առիթով համախմբվելով համայն հայության հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ վերանորոգում ենք Բարձրյալին ու մեր բարեպաշտ ժողովրդին ծառայելու սրբազան մեր ուխտը և վերահաստատում հավատարմությունն ու սերը առ Սուրբ Էջմիածինը և Ամենայն Հայոց Հայրապետը:

Ղևոնդյանց սուրբ նահատակների օրինակը բոլոր ժամանակներում հայ հոգևորականի համար հավատքի և հոգևոր ժառանգության հանդեպ նախանձախնդրության, անմնացորդ ծառայության և հայրենյաց սիրո մշտահունչ պատգամ է: Արդի աշխարհի փոփոխվող իրողությունների և ներազգային կյանքի դժվարությունների հանդիման կոչված ենք Ղևոնդյանց սխրանքի խորհրդով պաշտպանելու աշխարհասփյուռ մեր ժողովրդի ազգային ու հոգևոր ինքնությունը, դարերով նվիրագործված արժեհամակարգը և հավատավոր մեր զավակների սրտերում անսասան պահելու ազգասիրության և եկեղեցասիրության ոգին:

Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ազգային ինքնության անսասան հիմքն է և հայրենի պետության կայունության ամուր հիմնասյուներից մեկը, որը պետք է պահպանել և զորացնել:

Վերջին ամիսներին Հայաստանի իշխանությունների կողմից Եկեղեցու և եկեղեցականների թիրախավորմամբ և հետապնդումներով խաթարվել է ազգային և եկեղեցական մեր կյանքը: Ստեղծված իրավիճակը բացասական հետևանքներ և լարվածություն է առաջ բերել մեր համայնքների կյանքում, ինչին, ցավոք, նպաստել է նաև որոշ եկեղեցականների անընդունելի ընթացքը:

Նոր պառակտումներից զերծ մնալու համար հրամայական է, որ քահանաներս, մեր ուխտին ու կոչմանը հավատարիմ, աշշեղորեն հետևենք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու կարգերին ու կանոններին, եղբայրասիրությամբ հետամուտ լինենք միաբանության վերականգնմանը և առ Աստված ապավինությամբ ու հավատի գործերով արդյունավորենք տիրավանդ մեր առաքելությունը:

Կոչ ենք անում մեր ժողովրդի զավակներին՝ փորձությունների այս շրջանում աներեր պահել նախնյաց հավատը և փարված մնալ մեր Սուրբ Եկեղեցուն և հայոց հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ միմյանց զորակցությամբ հայոց տապանը առաջնորդելու դեպի ապահով և լուսավոր նավահանգիստ:

Մեր մշտամնա աղոթքն է, որ երկնավոր Տերը խաղաղության մեջ պահի համայն աշխարհը, ապահով և անսասան՝ հայրենի մեր երկիրը, անխռով ու համերաշխ՝ մեր ժողովրդին և հավետ պայծառ՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին:

«Աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով, որ բոլորդ էլ նույն խոսքն ունենաք, և ձեր մեջ բաժանումներ չլինեն, այլ հաստատուն մնաք նույն մտքի ու նույն նպատակի մեջ» (Ա Կորնթ. Ա 10):

Մայր Աթոռում կատարվեց Տյառնընդառաջի նախատոնակը

Փետրվարի 14-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Տյառնընդառաջը՝ 40-օրյա մանուկ Հիսուսի՝ տաճարին ընծայման տոնը, որի սկիզբն ազդարարվեց փետրվարի 13-ի երեկոյան:

Տոնի առիթով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը եկեղեցականների հանդիսավոր թափորի ուղեկցությամբ մուտք գործեց Մայր Տաճար, ուր Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեցին Երեկոյան ժամերգություն և նախատոնակ:



Ապա տեղի ունեցավ տարվա առաջին Անդաստանի կարգը, որի ընթացքում օրհնվեցին աշխարհի չորս կողմերը:



Այնուհետև «Քրիստոս փառաց» տաղի ներքո Մայր Տաճարի Իջման Սուրբ Սեղանի կանթեղից վառված մոմով Նորին Սրբությունը Հիսուս Քրիստոսին խորհրդանշող կենսատու լույսը փոխանցեց ներկա հավատավոր ժողովրդին:

Արարողության ավարտին եկեղեցականաց թափորն ուղղվեց դեպի Մայր Աթոռի միաբանական շենքի շրջափակ, ուր ներկայությամբ բազում հավատավոր հայորդիների, Ամենայն Հայոց Հովվապետի ձեռամբ վառվեց Տյառնընդառաջի խարույկը: Վեհափառ Հայրապետը նաև հավատավոր հայորդիներին ընծայեց խաչեր:

Տյառնընդառաջի տոնը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հռչակվել է Նորապսակների օրհնության օր: Այս կապակցությամբ փետրվարի 14-ին՝ Մայր Տաճարում և բոլոր եկեղեցիներում մատուցվող Սուրբ Պատարագի ավարտին, կատարվեց նորապսակ զույգերի օրհնության կարգ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ ԶՈՒ հոգևոր սպասավորներին

Փետրվարի 6-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց գնդերեց քահանա հայրերին, որոնց ծառայությունը ՀՀ ԶՈՒ-ում դադարեցվել է փետրվարի 1-ից:



Նորին Սրբությունն իր գնահատանքն ու հայրական օրհնությունը բերեց հոգևոր հայրերին՝ գոհունակությամբ անդրադառնալով նրանց նվիրյալ ծառայությանը՝ ի նպաստ հայոց բանակում հոգևոր-բարոյական առողջ մթնոլորտի ձևավորման, զինվորականների հավատքի, առ հայրենին սիրո և մարտական ոգու զորացման: Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսը կատարեց նաև հոգևոր սպասավորների նոր նշանակումներ՝ հորդորելով քահանա հայրերին նույն նվիրումով և հանձնառու ոգով շարունակել հոգեփրկչական իրենց առաքելությունը ծառայության նոր վայրերում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռոբերտ Ամստերդամին

Փետրվարի 11-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հանդիպեց միջազգային իրավաբան Ռոբերտ Ամստերդամի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին անազատության մեջ գտնվող եպիսկոպոսների և ազգային բարերար Սամվել Կարապետյանի նկատմամբ ընթացող իրավական գործընթացները:



Զրուցակիցներն անդրադարձան մարդու իրավունքների պաշտպանության խնդիրներին՝ կարևորելով արդարության և օրինականության պահպանման հրամայականը:

Հայտարարություն

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը խստորեն դատապարտում է և խոր վրդովմունք հայտնում ՀՀ դատախազության կողմից Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և Նորին Սրբության ելքը Հայաստանից արգելելու փաստի առնչությամբ:

Ամենայն Հայոց Հայրապետի նկատմամբ այս գործողությունները անհիմն են ու անօրինական և կրում են ընդգծված քաղաքական բնույթ:

Եկեղեցու ներքին կյանքին միջամտելու ակնհայտ հակասահմանադրական և հակաօրինական այս կեցվածքով իշխանությունը խոչընդոտում է Վեհափառ Հայրապետի հովվապետական գործունեությունը:

Այս ամենը նաև անհարգալից վերաբերմունք է միլիոնավոր հավատացյալների և դարավոր այն կառույցի հանդեպ, որը եղել և մնում է հայոց պետականության անսասան հենասյունը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը կոչ է անում անհապաղ վերանայել Հայոց Հայրապետի, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ վեց եպիսկոպոսների և քարտուղարի նկատմամբ կայացված ապօրինի որոշումները, որ պառակտում են մեր հասարակությանը, ցնցումներ է առաջացնում հայրենի պետության վարկն ու հեղինակությունը:

14.02.2026 թ.

Հայտարարություն

Ի սեր ցավով տեղեկացանք Բաքվում ապօրինաբար պահվող Արցախի ռազմաքաղաքական ղեկավարների նկատմամբ կայացրած ակնհայտ շինծու դատավճիռների մասին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը վերահաստատում է իր հանձնառությունը՝ աշխարհասփյուռ իր կառույցներով շարունակելու հետևողական ջանքեր գործադրել միջազգային և միջեկեղեցական հարթակներում՝ ի խնդիր գերեվարված հայորդիների ազատ արձակման և հայրենիք վերադարձի:

Սուրբ Էջմիածինն իր զորակցությունն է հայտնում Արցախի պատանդառված պետական գործիչներին, ռազմագերիներին և նրանց ընտանիքներին:

5.02.2026 թ.

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Տյառնընդառաջի կրակը՝ իբրև Հովհաննու Ավետարանի լույս

Տյառնընդառաջը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու տոնացույցում այն եզակի տոներից է, որտեղ սուրբ պատմությունը, աստվածաբանական խորհրդաբանությունը, ազգային հիշողությունն ու ժողովրդական ընկալումները հատվում են ոչ որպես իրար հակադիր շերտեր, այլ որպես մեկ ամբողջական հոգևոր փորձառության տարբեր արտահայտություններ: Այս տոնը չի սահմանափակվում միայն պատմական հիշատակությամբ կամ ծիսական արարողությամբ. այն կենդանի խոսք է Եկեղեցու, պատմության և մարդու սրտի միջև: Տյառնընդառաջը ոչ միայն անցյալի հիշողություն է, այլև ներկայի կոչ՝ ուղղված յուրաքանչյուր հավատացյալի, որպեսզի նա իր կյանքի խավարի մեջ ճանաչի Լույսը և համարձակվի ընդառաջ գնալ Նրան:

Միաժամանակ Տյառնընդառաջի տոնը Հայ Եկեղեցու տոնացույցում պատկանում է այն խորախորհուրդ տոներին, որոնց շուրջ դարերի ընթացքում կուտակվել են թե՛ աստվածաբանական մեկնություններ, թե՛ ժողովրդական պատկերացումներ, և երբեմն՝ նաև թյուրիմացություններ: Տոնի արտաքին, առավել տեսանելի կողմը՝ կրակը, հաճախ դարձել է մեկնաբանությունների առանցք, երբեմն անգամ այնպիսի ընկալումների հիմք, որոնք փորձում են տոնը կապել հեթանոսական կամ կրակապաշտական ավանդույթների հետ: Սակայն նման մոտեցումները, զրկված լինելով աստվածաբանական և եկեղեցական խորքային քննությունից, մթագնում են տոնի իրական բովանդակությունը:

Բոլորիս առաջնահերթ պետք է Տյառնընդառաջի խորքային բովանդակությունը բացել ոչ թե մակերեսային ավանդույթների, այլ ավետարանական Լույսի դիտանկյունից՝ հատկապես Հովհաննու Ավետարանի առաջին գլխում զետեղված Լույսի քրիստոլոգիական ընկալման լույսի ներքո: Ուստի, այստեղ Տյառնընդառաջի կրակը չի դիտարկվում որպես ինքնանպատակ կամ նախաքրիստոնեական մնացուկ, այլ որպես լուսաբանող նշան՝ ուղղված դեպի ճշմարիտ Լույսը, «որ լուսավորում է ամեն մարդու, որ աշխարհ է գալիս» (Հովհ. Ա 9):

Այս տրամաբանությամբ՝ Տյառնընդառաջը կենսատու և քրիստոնեական մի տոն է, որն իր բովանդակային ամբողջականությամբ ընկալելու համար պետք է դիտարկվի միաժամանակ պատմական, տիպաբանական, այլաբանական և հոգևոր-գոյաբանական հարթություններում:

Առավել մեծ կարևորություն են պահանջում տոնի ծագումնաբանությունը, անվանումների իմաստային խորքը, ժողովրդական ավանդույթների ձևավորումը գիտակից քննարկելն ու սերտելը, ինչպես նաև հեթանոսության հետ դրանց հարաբերությունը հասկանալը՝ տեսնելու համար ոչ թե ժառանգական կապ, այլ հաղթահարման և հաղթանակի տրամաբանություն: Իրականության մեջ Տյառնընդառաջի կրակը ներկայացվում է ոչ որպես պաշտամունքի առարկա, այլ որպես հաղթահարված խավարի նշան, ինչպես որ Եկեղեցու պատմության մեջ Քրիստոսի Լույսի գերիշխանության մասին են վկայում հեթանոսական սրբավայրերի տեղում կանգնեցված քրիստոնեական սրբարանները: Ուստի, մենք՝ որպես քրիստոնյա Եկեղեցու զավակներ, պետք է տեղյակ լինենք մեր Սուրբ Եկեղեցում տոնախմբվող օրերի բովանդակային պատկերից: Վերոնշյալ տոնի պարագայում մեր վերլուծական միտքը հատկապես պետք է հուշի, որ անկախ բոլոր ոչքրիստոնեական մեկնաբանություններից՝ Տյառնընդառաջի կրակը ոչ թե ինքնանպատակ տարր է, այլ խորհրդանիշ՝ ուղղված դեպի ավետարանական Լույսը, որ Քրիստոս է, ինչպես վկայում է Հովհաննու Ավետարանի առաջին գլուխը. «Լույսը խավարի մեջ լուսավորում է, իսկ խավարը նրան չտիրեց» (Հովհ. Ա 5):

Տյառնընդառաջը ներկայանում է որպես հավատքի ճանապարհի պատկեր՝ մթությունից դեպի Լույս, սպասումից դեպի հանդիպում, լռությունից դեպի Խոսք: Այն մեզ հիշեցնում է, որ Տիրոջն ընդառաջ գնալը միայն մեկ օրով կամ մեկ ծեսով սահմանափակվող իրադարձություն չէ, այլ ամենօրյա կոչ՝ վառ պահելու սրտի ջահը, որպեսզի կյանքում առկա խավարի մեջ կարողանանք ճանաչել և ընտրել Քրիստոսին՝ որպես միակ կյանք տվող Լույսի:

Տյառնընդառաջի ծագումնաբանությունը և աստվածաշնչյան հիմքը

Տյառնընդառաջն ուղղակիորեն կապված է աստվածաշնչյան՝ Տիրոջն ընդառաջ գնալու (մանուկ Հիսուսին Տաճարին ընծայելու) տոնի հետ, որը, ավետարանական վկայությամբ, տեղի ունեցավ Քրիստոսի ծնունդից քառասուն օր անց, երբ Մարիամ Աստվածածինը և Հովսեփը Մանկանը տարան Երուսաղեմի տաճար՝ օրենքի համաձայն ներկայացնելու Տիրոջը. ➥ *էջ 5*

Սուրբ Ղևոնդ Երեցի կենսական և վերժամանակյա պատգամները (մտորումներ Վարդանանց սիրանքի շուրջ)

«Եթե ուրեմն մահը մեռնում է մահով, չվախենանք Քրիստոսիմ մահակից լինել, որովհետև ում հետ որ մեռնենք մենք, Նրա հետ էլ կկենդանանանք...»

Եղիշե, «Վարդանի և հայոց պատերազմի մասին»



Գրիգոր Խանջյան. Վարդանանք, 1981 թ.

Վարդանանց հերոսական ճակատամարտի կրոնական դիմադրության առաջնորդն ու ոգին Սուրբ Ղևոնդ Երեցն էր: Այդ իսկ պատճառով հոգևորականաց զորքը նրա անունով կոչվեց Ղևոնդյանք: Նա նաև խմբի ամենատարեց անդամն էր. ավելի քան 70 տարեկան էր, երբ նահատակվեց:

Սուրբ Ղևոնդը ծնվել է Վանանդ գավառի Իջաանք գյուղում, սակայն իր եկեղեցական գործունեության հիմնական շրջանը, հավանաբար, եղել է հարևան Բագրևանդ գավառը: Նա հայոց բազմերախտ Հայրապետ Սուրբ Սահակի առաջին աշակերտներից էր՝ գլխավորը նրանց մեջ: Ղևոնդն աչքի էր ընկնում որպես գործունյա և ուժեղ անհատականությամբ եկեղեցական՝ խիզախության, նախանձախնդրության և արիության ոգով: Նա եռանդուն էր ու կորովով լի, համարձակախոս էր և հռետոր՝ օժտված առաջնորդելու բնատուր կարողությամբ: Արիական Ղևոնդը գլխավորեց կեղծարար նախարարների դեմ դիմադրությունը, ինչպես նաև նրանց դեմ, ովքեր փորձ էին անում մազդեզական կրոնն ամրապնդել Հայոց երկրում: Երբ մոգերը եկան հասան Հայոց աշխարհը և փորձեցին պարսկական կրոնը տարածել Անգղ գյուղում՝ հայ-պարսկական սահմանին, Ղևոնդ Երեցը դարձավ դիմադրական շարժման առաջնորդը և քարերով ու գյուղատնտեսական գործիքներով դուրս եկավ պարսկական մոգերի ու մոգպետների դեմ՝ նրանց երկրից դուրս քշելով: Այդ իրադարձություններից հետո Ղևոնդը դարձավ Հովսեփ Կաթողիկոսի անբաժան օգնականն ու գլխավոր խորհրդատուն ողջ դիմադրական շարժման ընթացքում: Օրմանյանը նրա դերն այդ ժամանակահատվածում ներկայացնում է հետևյալ կերպ. «Իր շնորհի զարգացման և ատենաբանելու կարողության շնորհիվ միշտ գլխավոր խոսողն էր թե՛ Ավարայրի բանակում, թե՛ Տիզբոնյան ատյանի առաջ և թե՛ Ռևանի դատական փորձի ժամանակ: Մի խոսքով, Ղևոնդը դարձավ այդ կրոնական շարժման հոգին, իսկ իր գործակիցները՝ նրա անունով կոչվեցին»:

«Լիակատար վարք Սրբոց»-ը ևս բարձր է գնահատում Ղևոնդ Երեցի դերը հակապարսկական պայքարի շրջանակներում. «Սուրբ Հոգով լցված մարդ էր, առատ ու լուսավոր վարդապետությամբ, որով քահանաներին և նախարարներին սպառազինում էր՝ քաջությամբ պայքարելու հավատի թշնամիների դեմ և Քրիստոսի Եկեղեցու հանդեպ ունեցած սիրով անձերը զոհաբերելու համար: Դրա համար պարսիկները Ղևոնդին համարում էին Հայոց աշխարհում տեղի ունեցած դեպքերի պատճառը և փորձում էին իրենց ամբողջ բարկությունը նրա վրա թափել»:

Ավարայրը ոչ այնքան տարածական ասպարեզ է, որքան գոյաբանական հարթություն, որտեղ մարդն ու ժողովուրդը կանգնում են վերջնական հարցի առաջ. ինչի՞ համար արժե ապրել և, եթե պետք է, հանուն ինչի՞ արժե մեռնել: Հայ ժողովուրդը կանգնած էր երկու հնարավորության առջև՝ կենսաբանական շարունակություն՝ առանց ինքնության, կամ վտանգված գոյություն՝ հավատի կյանքով: Ընտրությունը կատարվեց ոչ օգտապաշտական հաշվարկով, այլ արժեքային չափանիշով: Այս ընտրությամբ հաստատվեց մի սկզբունք, որ գոյությունը միայն ֆիզիկական շարունակականություն չէ: Գաղափարազուրկ կյանքը վերածվում է գոյատևման, մինչդեռ բարձրագույն իմաստի համար վտանգված կյանքը դառնում է լիարժեք գոյություն: Վարդանանք ավելի բարձր են համարում արդարության համար զոհաբերությունը, քան հարմարավետ գոյությունը՝ առանց ազատության: Այս տեսանկյունից Վարդանանց պայքարը վախի հաղթահարման և արժանապատիվ կեցության օրինակ է:

Վարդանանց ճակատամարտի խորհուրդը ոչ միայն անցյալի հիշողություն է, այլև մշտապես արդիական փիլիսոփայական հարցադրում: Այն հիշեցնում է, որ ժողովուրդները ոչ թե պարզապես ապրում են, այլ ընտրում են իրենց գոյության կերպը: Իսկ երբ այդ ընտրությունն արվում է ճշմարտության օգտին, անգամ պարտությունն է դառնում հաղթանակ, իսկ մահը՝ կյանքի վկայություն:

Ղևոնդ Երեցն իր աշակերտներին և ժողովրդին հորդորում էր մահից չվախենալ. նա բացատրում էր, որ մահն անցում է դեպի հավիտենական կյանք: Նրա պատգամը պարզ էր, բայց խորիմաստ. «Ում հետ որ մեռնենք մենք, Նրա հետ էլ կկենդանանանք»: Այս հավատքն ու վճռակամությունը ոգեշնչեցին Վարդանանց բանակին, որն անզիջում դիմագրավեց՝ թշնամու մեծաքանակ բանակների դեմ կռիվ տալով հանուն քրիստոնեական արժեքների՝ որպես ազգային գոյատևության և հոգևոր ինքնության հիմք:

Ղևոնդ Երեցի կոչերը ոչ միայն արիության և անձնազոհության հրավեր էին, այլև աստվածաբանական կուռ ձևակերպումներ: Նա քաջագույնս գիտակցում էր, որ հոգևորականի կոչումը չի սահմանափակվում միայն խորհուրդ տալով կամ կարգապահությամբ առաջնորդելով: Հոգևորականը պարտավոր է լինել ժողովրդասեր և աստվածապաշտ, հավատքն ուղեկցել գործով, օրինակով և անձնական նվիրվածությամբ, առաջնորդել մարդկանց դժվար պահերին, ուղղորդել նրանց հավատքի ճանապարհով և ներշնչել մահից չվախենալ, լինել արդար ու պայքարելու ոգով տոգորված: Ղևոնդ Երեցը կենդանի օրինակ է՝ ցույց տալու, որ հոգևոր արիությունը չի դրսևորվում միայն եկեղեցական պատերի ներսում, այլ նաև տարածվում է ազգային ու հասարակական կյանքում՝ դառնալով անձի և ժողովրդի ազատության, հավատքի ու արժանապատվության երաշխիք:

Վարդանանց պատերազմը, ինչպես նաև Ղևոնդ Երեցի և նրա աշակերտների գործունեությունը վկայում են այն խիզախության, բարոյական հաստատակամության և հոգևոր ուժի մասին, որն անհրաժեշտ է ծանր ժամանակներում: Նրանց առաջնորդությունը հիմնված էր հավատի աներեր ուժի, անձնական նվիրումի, սեփական ժողովրդի հանդեպ հոգատարության և հայրենասիրության գաղափարների վրա:

Սուրբ Ղևոնդը հայոց զորքին ուղղված իր պատգամում բազմիցս անդրադառնում է Քրիստոսին նմանվելու գաղափարին՝ հատկապես շեշտելով Նրան մահակից լինելը: «Քրիստոսին մահակից լինել» արտահայտությունը քրիստոնեական, աստվածաբանական իմաստ ունի և վերաբերում է հավատքի համար պատրաստակամությամբ զոհաբերությանը: Այն մատնանշում է մի ամբողջական հոգևոր գաղափար, որը ձևակերպվել է նախ և առաջ սուրբ Պողոսի առաքելական գործերում: Այսպես՝ հռոմեացիներին ուղղված նամակում (6:8) կարդում ենք. «Իսկ եթե մեռանք Քրիստոսի հետ, հավատում ենք, որ Նրա հետ էլ կապրենք»: Կորնթացիներին ուղղված Բ նամակի 4:10–11-ում նույն միտքն ավելի ընդարձակ է ձևակերպված. «Մեր մարմինների մեջ շարունակ կրում ենք Հիսուսի մահը, որպեսզի Հիսուսի կյանքն էլ հայտնվի մեր մարմինների մեջ: Քանզի մենք, որ ապրում ենք, միշտ մահվան ենք մատնվում ի սեր Հիսուսի, որպեսզի Հիսուսի կյանքն էլ հայտնվի մեր մահկանացու մարմինների մեջ»:

Մահվան քրիստոնեական գաղափարը քրիստոնեության հիմքում ընկած հոգևոր աստվածաբանական ընկալում է, որը սերտորեն կապված է Քրիստոսի մահվան ու հարության ուսմունքների հետ: Հիսուսի խաչելությունն ու հարությունն ապացուցեցին, որ մահը կորցրել է վերջնական իշխանությունը: Հավատքի համար մահվանը պատրաստ լինել նշանակում է պատրաստ լինել շարունակելու Քրիստոսի հետ միությունը նույնիսկ վտանգի, նահատակության կամ ցանկացած սպառնալիքների և մոլեգնող փորձությունների բովում: Նահատակությունը քրիստոնյաների համար մահ չէ. այն դիտարկվում է որպես անցում դեպի հավիտենական կյանք՝ Քրիստոսի հետ երկնային արքայության ուրախարար նավահանգստում: Հավատքը հաճախ պահանջում է անձնուրաց կյանք և նահատակություն: Այն կոչ է՝ ուղղված հավատացյալին, լինելու աներկյուղ ու քաջ՝ հանուն ճշմարտության, արդարության, հավատքի և ազգային-քրիստոնեական արժեքների: Ղևոնդ Երեցի և Վարդանանց պատերազմին մասնակցած հավատավորների համար դա չի սահմանափակվում միայն մահվան դրսևորումով, այլ ներառում է արիության, հոգևոր տոկունության և ժողովրդի պաշտպանության սխրանքը:

Մահվանից չվախենալու գաղափարը Ղևոնդ Երեցի խոսքում հաճախ է հիշատակում Եղիշե պատմիչը. «Այս գիտենալով, եղբայրնե՛ր, չքուլանանք ու չվհատվենք, այլ պինդ սրտով և հաստատուն հավատով հոժարակամ հարձակվենք այն թշնամիների վրա, որ վեր են բարձրացել, գալիս են մեզ վրա: Մեր հույսը կրկնակի է երևում մեզ. եթե մեռնենք, կապրենք, և եթե մեռցնենք, միևնույն կյանքն է կանգնած մեր առաջ....»: Այս խոսքերը, որոնք արտահայտում են Վարդանանց շարժման հոգևոր մթնոլորտը, մի ամբողջ քրիստոնեական աշխարհընկալում են, որտեղ մահը այլևս վերջ չէ, իսկ կյանքը միայն երկրային գոյությունը չէ: Այստեղ ձևավորվում է այն մտածողությունը, որը դարձավ հայ ժողովրդի պատմության առանցքային հանգրվաններից մեկը՝ հավատի, ազատության և ինքնության համար անձնազոհ պայքարի աստվածաբանությունը:

Քրիստոնեական հավատքի կենտրոնական ճշմարտություններից մեկն այն է, որ մահը կորցրել է իր վերջնական իշխանությունը: Վարդանանց դարաշրջանի հոգևոր առաջնորդների համար այս համոզումը գործնական նշանակություն ուներ. մահից չվախենալը ոչ թե ինքնանպատակ խիզախություն էր, այլ հավատի տրամաբանական հետևանք: Երբ մարդ վստահ է, որ կյանքը շարունակվում է մահվանից հետո աստվածային օթևաններում, մահը դադարում է ահաբեկիչ ուժ լինելուց: Սա քրիստոնեական մտածողության խորքային դրսևորում է: Այստեղ հաղթանակը չափվում է ոչ թե կենսաբանական գոյատևմամբ, այլ հավատարմության ճշմարտությամբ: Թշնամուն հաղթելը և նահատակվելը նույն ուղղությամբ են տանում՝ դեպի կյանք, որովհետև երկուսն էլ իրականացվում են Աստծու կամքով և հավատքով: Վարդանանց պայքարում հստակ ընդգծվում է, որ մահն ու կյանքը հակադրություններ չեն, այլ միևնույն ճշմարտության տարբեր դրսևորումներ:

Վարդանանց պատերազմը հենց այս իմաստով է բացառիկ. այն պատերազմ էր ոչ թե տարածքի կամ իշխանության, այլ հավատի և հոգևոր ազատության համար: Հոգևորականներն այստեղ հանդես եկան ոչ որպես կողքից դիտողներ, այլ որպես առաջնորդներ, քարոզիչներ, մխիթարիչներ և ոգեշնչողներ: Ղևոնդ Երեցի և նրա նման քաջարի հոգևորականների խոսքը մարտի դաշտում նույնքան զորեղ էր, որքան սուրը՝ զինվորի ձեռքում:

Վարդանանց պայքարն արդար և անհրաժեշտ դիմադրություն է, ոչ թե ագրեսիա: Այն իրականացվում է «հոժարակամ»՝ գիտակցաբար և ազատ կամքով, ինչը քրիստոնեական բարոյագիտության մեջ առանձնահատուկ կարևորություն ունի:

Մեր օրերում թշնամիներն այլևս կարող են զենքի չդիմել, այլ դրա փոխարեն իրենց պայքարն իրականացնել չարանենգ գաղափարներով, անտարբերության քարոզներով, արժեհամակարգի քայքայմամբ: Սակայն դիմակայելու սկզբունքը նույնն է. չքուլանալ, չվհատվել, պահպանել հավատքն ու ինքնությունը: Այս պատգամը հատկապես կարևոր է մեր օրերում, երբ հասարակությունը կանգնած է բարոյական ու հոգևոր ընտրությունների առաջ: Վարդանանց մտածողությունը մեզ հիշեցնում է, որ կյանքը չի չափվում միայն ապրած տարիներով, այլ նաև աներեր հավատով և աստվածասեր ու ազգանվեր ընթացքով:

Ղևոնդ Երեցի նմանատիպ պատգամներից է հետևյալը. «Թո՛ղ ոչ ոք ձեր բաժինը ձեզնից չկտրի և ձեզ օտար ու խորթ դարձնելով՝ բաժնից զրկի....»: 5-րդ դարի մեծագույն հոգևոր առաջնորդը կոչ է անում պահպանել անհատական, հոգևոր և ազգային ինքնությունը, պաշտպանել հավատքն ու արժանապատվությունը, չտրվել արտաքին ճնշումներին կամ օտար ազդեցությանը: Այս խոսքը ժամանակին ուղղված էր հավատավոր ժողովրդին և հոգևորականներին՝ մշտապես հիշեցնելով, որ հավատքը, հոգևոր ժառանգությունը և ազգային արժեքները անձնական և հանրային կյանքի անբաժան հիմնասյուներն են: Այսօր էլ մեր հոգևորականությունը նվիրվածությամբ, սիրով ծառայություն է մատուցում ժողովրդին և Աստծուն:

Ղևոնդ Երեցի այս պատգամը նաև ազգային ու հավաքական ինքնության մասին է: Երբ մարդը կամ համայնքը կորցնում է իր «բաժինը», ենթարկվում է օտար ազդեցության, դառնում օտար ու խորթ իր սեփական պատմության, մշակույթի ու հավատքի նկատմամբ: Վարդանանց պատերազմը, Ղևոնդ Երեցի և նրա աշակերտների գործունեությունը վառ օրինակ են այն մասին, որ հավատքի համար անձնազոհ լինելը և ազգային ինքնությունը պահպանելը անմիջականորեն կապված են: Ղևոնդն առաջնորդեց ժողովրդին, հորդորեց չվախենալ մահից, պաշտպանեց հավատքը և ապահովեց, որ «բաժնից զրկված չլինեն», իսկ դա դարձավ ոչ միայն հոգևոր, այլև ազգային պարտք՝ հանուն երկրի և ազգային Եկեղեցու:

Ղևոնդ Երեցի «Թո՛ղ ոչ ոք ձեր բաժինը ձեզնից չկտրի» խոսքը ոչ միայն հոգևոր պատգամ է, այլև հավատի, արժանապատվության և ազգային ինքնության փիլիսոփայություն: Այն հաստատում է, որ անհատական և հավաքական «բաժնի» պահպանությունը հիմնարար է ինչպես հոգևոր, այնպես էլ ազգային կյանքում: ➥ *էջ 6*

Տյառնընդառաջի կրակը՝ իբրև Հովհաննու Ավետարանի լույս

↩ էջ 3

«Իսկ երբ Մովսեսի օրենքի համաձայն՝ Մարիամի մաքրվելու օրերը լրացան, մանկանը բերեցին Երուսաղեմ՝ Տիրոջը ներկայացնելու, ինչպես Տիրոջ օրենքում է գրված. «Ամեն արու, որ արգանդ բացի, Տիրոջ համար սուրբ կկոչվի»» (Ղուկ. Բ 22–23): Սա նշանակում է, որ բացի Մովսիսական օրենքից և առաջնեկ արու զավակին՝ իբրև Աստուծո Սուրբի, Տաճարին ընծայելու կարգից՝ հրեա ժողովրդի համար մեծագույն առիթ էր գնալու Տաճար՝ ընդառաջ Տիրոջը և առավելաբար գնալու մեծագույն ընծայով՝ առաջնեկ զավակով: Այստեղ է, որ տեղի ունեցավ հայտնի հանդիպումը Սիմեոն Ծերունու հետ, որը, Սուրբ Հոգով առաջնորդված, Մանկան մեջ ճանաչեց սպասված Մեսիային և ասաց. «Իմ աչքերը տեսան Քո փրկությունը, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ, լույս՝ հեթանոսներին լուսավորելու և փառք՝ Քո ժողովրդի՝ Իսրայելի համար» (Ղուկ. Բ 30–32): Այս վկայությունն ինքնին ցույց է տալիս, որ Տյառնընդառաջի խորքային առանցքը Լույսն է՝ ոչ առարկայական, այլ փրկարար Լույսը, որ Քրիստոս է: Վերոնշյալ մեջբերման մեջ Սիմեոն Ծերունու՝ «....Լույս՝ հեթանոսներին լուսավորելու» (Ղուկ. Բ 32) արտահայտությունը Տյառնընդառաջը դարձնում է միսիոներական տոն և ինչ-որ իմաստով ցույց տալիս քրիստոնեության միսիան: Այն հիշեցնում է, որ Լույսը չի պահվում մեկ ժողովրդի կամ համայնքի համար, այլ կոչված է լուսավորելու բոլոր ազգերին: Տյառնընդառաջի կրակը նաև փոխանցման նշան է՝ լույսից լույս:

Տյառնընդառաջի պատմության մեջ հաճախ երկրորդ գծում են մնում Սիմեոն Ծերունու և Աննա մարգարեուհու կերպարները, սակայն նրանք ներկայացնում են հավատարիմ սպասման նախօրինակը: Ղուկաս Ավետարանիչն այդ ծերունու մասին ասում է. «Այդ մարդն արդար ու աստվածավախ էր և Իսրայելի մխիթարություն էր ակնկալում, և Սուրբ Հոգին նրա վրա էր» (Ղուկ. Բ 25): Ավետարանիչը հիշատակում է նաև Աննա մարգարեուհուն և ասում. «Գրեթե ութսունչորս տարեկան այրի էր. տաճարից չէր հեռանում, ծոմապահությամբ ու աղոթքով գիշեր-ցերեկ Աստծուն էր ծառայում» (Ղուկ. Բ 37): Նրանց կյանքը ցույց է տալիս, որ Լույսը տեսնում են նրանք, ովքեր երկար ժամանակ պատրաստել են իրենց ներաշխարհը: Տյառնընդառաջը, այսպիսով, դառնում է հոգևոր զգոնության տոն:

Այո՛, Տիրոջ ընդառաջումը տեղի է ունենում Տաճարում, ինչը խորապես խորհրդանշական է: Տաճարը Հին Կտակարանում Աստծո ներկայության վայրն էր, սակայն Տյառնընդառաջով բացահայտվում է, որ իրական Տաճարը Քրիստոսն Ինքն է. «Քանդեցեք այս տաճարը, և երեք օրում Ես կվերականգնեմ այն» (Հովհ. Բ 19): Եկեղեցին՝ որպես Քրիստոսի Մարմին, դառնում է այդ հանդիպման շարունակական վայրը, իսկ Տյառնընդառաջը՝ եկեղեցական կյանքի նախապատկեր:

«Տյառնընդառաջ» անվան ստուգաբանությունը և ավանդապատումը

«Տյառնընդառաջ» բառը հայերենում ունի աստվածաբանական խորք. բառացիորեն նշանակում է «Տիրոջն ընդառաջ գնալ»: Ժողովրդական և ավանդական մեկնություններից մեկի համաձայն՝ հրեա ժողովուրդը, լսելով Տիրոջ ծննդյան ավետիսը, գիշերով վառեց ջահերը և դուրս եկավ Նրան ընդառաջ: Թեպետ այս պատմությունը չունի սուրբգրային ուղղակի արձանագրում, այն այնուամենայնիվ արտահայտում է խորապես ավետարանական ճշմարտություն՝ Լույսը ճանաչելու և Նրան ընդառաջ գնալու գաղափարն ու ոգին:

Այս ավանդապատումը այլաբանական իմաստով ժամանակից դուրս է գալիս և դառնում յուրաքանչյուր քրիստոնյայի կյանքի օրինաչափություն. ամեն օր մարդը կոչված է իր սրտի ջահը վառելու, որպեսզի խավարի միջով քայլելով՝ ընդառաջ գնա Տիրոջը, ինչպես գրված է. «Ձեր մեջ եղող լույսը թող լուսավորի մարդկանց առաջ» (Մատթ. Ե 16):

Տյառնընդառաջի կրակը և նրա քրիստոնեական խորհուրդը

Տյառնընդառաջի կրակը չի կարելի հասկանալ որպես պաշտամունքային առարկա կամ ինքնանպատակ ծես: Այն խորհրդանշական է, իր իմաստն ստանում է միայն Ավետարանի լույսի ներքո և առանց Ավետարանի ոգու՝ առանձին, չունի որևէ աղերս մեր քրիստոնեական ու վարդապետական մտքի հետ: Հովհաննու Ավետարանի նախաբանը հստակ սահմանում է այս կրակի և նույն կրակից ճառագայթող լույսի էությունը. «Կյանքը Նրանով էր, և կյանքը մարդկանց լույսն էր» (Հովհ. Ա 4):

Տոնի կրակն այս իմաստով խորհրդանշում է ոչ թե աստվածացված տարր, այլ ճանապարհ լուսավորող ջահ, այն լույսը, որով մարդը, լուսավորելով իր քայլերը, շարժվում է դեպի իրական Լույս՝ Քրիստոս: Ինչպես նավերի համար փարոսի լույսն է ցույց տալիս ապահով նավահանգիստը, այնպես էլ Տյառնընդառաջի կրակը մատնանշում է Քրիստոսին, բայց ինքնին նպատակ չէ: Ինչպես փարոսի լույսը չի փրկում նավն իր մեջ, այլ ուղղություն է ցույց տալիս, այնպես էլ Տյառնընդառաջի կրակը չի փրկում ինքնին, այլ մարդու հայացքն ուղղում է դեպի Փրկիչ: Խավար ծովում նավը չի փնտրում կրակը, այլ այն Լույսը, որն առաջնորդում է դեպի ափ: Սաղմոսերգուն ասում է. «Քո խոսքը ճրագ է իմ ոտքերի համար և լույս՝ իմ ճանապարհի համար» (Սաղմ. ՃԺԸ 105). հենց այս մտայնությամբ է պետք ընկալել Տյառնընդառաջի կրակը և նույն գիտակցումով վերաբերվել տոնի ծիսական շերտին: Սաղմոսերգուի պատկերած ճրագը Տյառնընդառաջի խորքային խորհուրդն է:

Տյառնընդառաջի Լույսը Հովհաննու Ավետարանում

Հովհաննու Ավետարանի առաջին գլուխը քրիստոնեական լույսի աստվածաբանության հիմնասյունն է. «Ճշմարիտ լույսն էր, որ լուսավորում է ամեն մարդու, որ աշխարհ է գալիս» (Հովհ. Ա 9): Տյառնընդառաջը հենց այս գալուստի ծիսական արտահայտությունն է: Կրակն այստեղ ոչ թե վերջնական նպատակ է, այլ մթության միջով դեպի Քրիստոս առաջնորդող լույսի նշան: Տյառնընդառաջի տոնը՝ իր ողջ բովանդակությամբ, ուղղված է դեպի Քրիստոս՝ որպես կյանքի, փրկության և ճշմարիտ Լույսի աղբյուր: Տոնի կրակը ոչ թե կրակապաշտական մնացորդ է, այլ ավետարանական խորհրդանիշ, որ հիշեցնում է մարդուն իր կոչման մասին՝ մթության միջով քայլել դեպի Լույսը, ջահը ձեռքին, սիրտը՝ վառված հավատով: Ինչպես ասում է Քրիստոս. «Ես եմ աշխարհի լույսը. ով իմ հետևից գա, նա խավարի մեջ չի քայլի, այլ կյանքի լույսը կընդունի» (Հովհ. Ը 12):

Լույսի տիպաբանությունը Սուրբ Գրքում՝ կրակից մինչև Քրիստոս

Սուրբ Գրքում լույսի և կրակի պատկերներն ունեն աստիճանական բացահայտում: Հին Կտակարանում կրակը հաճախ հանդես է գալիս որպես Աստծո ներկայության նշան. երբ Մովսես մարգարեին Տիրոջ հրեշտակը երևաց վառվող մորենու միջից, մարգարեն տեսավ, որ «....մորենին կրակով վառվում էր, բայց չէր սպառվում» (Ելք Գ 2), որն էլ իր հերթին Աստծո կենդանի ներկայության նախատիպն է: Հին Ուխտում Աստծո առաջնորդության մի դրսևորում է նաև սյունաձև կրակը, որ գիշերն առաջնորդում էր Իսրայելի ժողովրդին անապատում. «Տերը գնում էր նրանց առջևից՝ ցերեկը ամպի սյունով ճանապարհ ցույց տալու նրանց, իսկ գիշերը՝ կրակի սյունով, որ նրանց լույս տա....» (Ելք ԺԳ 21), որն էլ մեզ՝ քրիստոնյաներիս, ցույց է տալիս, որ հոգու խավարի մեջ ժողովուրդը, առանց աստվածային լուսավորության, չի կարող քայլել: Սակայն այս բոլոր պատկերները մնում են նախապատրաստական և ստվերային բուն Լույսի համար:

Նոր Կտակարանում այս նախատիպերը իրենց լրումն են գտնում Քրիստոսով: Այլևս ոչ թե կրակն է առաջնորդում, այլ Անձը՝ Լույսը, որը մարմին առավ: Հովհաննու Ավետարանը վկայում է. «Եվ Բանը մարմին դարձավ ու բնակվեց մեր մեջ....» (Հովհ. Ա 14): Տյառնընդառաջի կրակը հենց այս անցումն է խորհրդանշում՝ ստվերից դեպի ճշմարտություն, նշանից դեպի բուն Լույս:



Մուղնիի Ավետարան, 11-րդ դար

Տյառնընդառաջի կրակը միաժամանակ խորհրդանշում է Աստծո հայտնության երկձևությունը. առաջնահերթ է Հին Ուխտի Կրակը՝ Աստծո ներկայության խորհրդավոր նշանը, և ապա՝ Նոր Ուխտի Լույսը՝ մարմնացած Ճշմարտությունը՝ Հիսուս Քրիստոս:

Հովհաննու Ավետարանի Լույսը՝ Տյառնընդառաջի առանցք

Հովհաննու Ավետարանի առաջին գլուխը ոչ միայն քրիստոլոգիական հռչակում է, այլև Տյառնընդառաջի բանալի: Հովհաննու Ավետարանի հետևյալ հատվածը՝ «Ճշմարիտ լույսն էր, որ լուսավորում է ամեն մարդու, որ աշխարհ է գալիս» (Հովհ. Ա 9), նշանակում է, որ նախորդ բոլոր լույսերը մասնակի էին: Եթե Տյառնընդառաջի կրակը կտրվի ավետարանական այս հռչակումից, կկորցնի իր իմաստը: Բայց երբ այն ընթերցվում է Հովհաննու Ավետարանի լույսի ներքո, դառնում է վկայություն Քրիստոսի և Նրա Փրկարար Լույսի մասին:

Շարունակելի

Հովհաննես սրկ. ԷՎԻՆՅԱՆ
Դիանա ՔՈՉԱՐՅԱՆ

Հանուն հավատքի պատերազմելու գաղափարը Սուրբ Գրքում

Հանուն հավատքի պատերազմելու գաղափարը Սուրբ Գրքում ամենաքննարկվող և միաժամանակ ամենաբարդ երևույթներից է: Այն հաճախ ենթարկվել է միակողմանի մեկնաբանությունների կամ ընկալվել է որպես սրբացված բռնություն, երբեմն էլ ամբողջությամբ մերժվել՝ որպես քրիստոնեական սիրո ուսմունքին հակասող երևույթ: Սակայն Աստվածաշնչի ամբողջական ընթերցումն ու համակողմանի ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ հավատքի համար մղվող պայքարը երբեք չի սահմանափակվում ռազմական գործողություններով, այն ունի բազմաշերտ՝ պատմական, բարոյական, հոգևոր և վախճանաբանական իմաստ ևս:

Հավատքի համար պատերազմը Հին Կտակարանում. պատմական և աստվածային Ուխտի իրագործման հարթություն: Հին Կտակարանում պատերազմը ներկայացվում է ոչ միայն քաղաքական կամ տարածքային պահանջներից մղված հակամարտություն, այլև նախ և առաջ աստվածային Ուխտի պահպանման և իրագործման միջոց: Իսրայելի ժողովուրդն Աստծո կողմից ընտրված համայնքն էր, որի գոյությունն ու պատմական առաքելությունը պայմանավորված են Աստծուն հավատարմությամբ: Ուստի՝ հավատքի դեմ ուղղված յուրաքանչյուր վտանգ ընկալվում է ոչ թե պարզապես արտաքին սպառնալիք, այլ գոյաբանական մարտահրավեր, որն ուղղված է ժողովրդի հոգևոր ինքնությանը և ուխտի շարունակականությանը:

Ելից և Հեսուի գրքերում պատերազմները բնութագրվում են որպես «Տիրոջ պատերազմներ». «Տերը պիտի պատերազմի ձեր փոխարեն, իսկ դուք լռեք» (Ելք 14:14): Այս խոսքը ցույց է տալիս, որ պատերազմը չի դիտարկվում որպես մարդկային նախաձեռնության կամ ռազմական կարողության արդյունք, այլ որպես աստվածային միջամտության և դատաստանի գործիք: Իսրայելի հաղթանակը պայմանավորված չէ զորքի թվով կամ զենքով, այլ Աստծո ներկայությամբ և կամքով: Այս կերպ պատերազմի գաղափարը դուրս է գալիս սովորական պատմական տրամաբանությունից և դառնում աստվածաբանական իրողություն:

Սակայն կարևոր է ընդգծել, որ Հին Կտակարանում պատերազմը երբեք ինքնանպատակ չէ և չի ընկալվում որպես բացարձակ արժեք: Այն սերտորեն կապված է բարոյական պատասխանատվության հետ: Երբ Իսրայելը մնում է ուխտին հավատարիմ, պատերազմը հանդես է գալիս որպես ազատագրող և պաշտպանիչ ուժ, իսկ երբ ժողովուրդը շեղվում է հավատքից և ընկնում կռապաշտության մեջ, նույն այդ պատերազմը վերածվում է աստվածային պատժի: Այս տրամաբանությունը հստակ արտահայտվում է Դատավորաց և Թագավորաց գրքերում, որտեղ ռազմական պարտությունները բացատրվում են ոչ թե ռազմավարական ձախողումներով, այլ հոգևոր անկմամբ:

Ուխտաբանական այս ընկալումը ցույց է տալիս, որ պատերազմը Հին Կտակարանում ունի դաստիարակչական և մաքրագործող նշանակություն: Այն նպատակ ունի ոչ թե ոչնչացնել հակառակորդին, այլ վերանորոգել ուխտը և վերականգնել ժողովրդի հավատարմությունն Աստծուն: Այդ պատճառով մարգարեներն անընդհատ հիշեցնում են, որ արտաքին հաղթանակն արժեք չունի, եթե ներքին ապաշխարություն չկա. «Լվացվե՛ք, մաքրվե՛ք, իմ աչքի առաջ ձեր չար արարքները թոթափե՛ք ձեզնից, վերջ տվեք ձեր չարագործություններին: Սովորեք բարի՛ք գործել, արդարությո՛ւն փնտրեք, փրկեք զրկվածի՛ն, արդարադա՛տ եղեք որբի հանդեպ, իրավո՛ւնք տվեք այրուն» (Ես. 1:16–17):

Մարգարեական գրքերում (Եսայի, Երեմիա, Եզեկիել) աստվածաբանական շեշտադրումն աստիճանաբար փոխվում է. պատերազմն այլևս ընկալվում է ոչ միայն որպես արտաքին թշնամու դեմ մղվող պայքար, այլև նախ և առաջ ներքին անհավատության և բարոյական ապականության դեմ պայքար: Թշնամի է դիտարկվում ոչ միայն օտար, հեթանոս ժողովուրդը, այլև չար ու աստվածուրաց սիրտը, որ շեղվել է Աստծուց և հաստատյալ կարգերից: Այս շրջադարձը հող է նախապատրաստում աստվածաբանական այն ըմբռնման համար, որի վրա հետագայում կկառուցվի Նոր Կտակարանի հոգևոր պատերազմի ուսմունքը:

Այսպիսով՝ Հին Կտակարանում հանուն հավատքի պատերազմը հանդես է գալիս որպես պատմական, կրոնական և բարոյական իրականություն, որտեղ արտաքին պատերազմն անբաժան է ներքին հոգևոր վիճակից: ↪ էջ 7

Վարք Ղևոնդյանց կամ Հայ Եկեղեցու պատմական առաքելությունը

Հարցազրույց Տ. Վրթանես քհն. Բաղալյանի հետ

— Տեր Վրթանես, ինչ նշանակություն ունեցան Սուրբ Ղևոնդյանց քահանաների սխրանքն ու նահատակությունը հայ հոգևոր-ազգային ինքնության պահպանման գործում:

— Սրբոց Ղևոնդյանց քահանաների նահատակությունն առանցքային դեր է ունեցել հայ հոգևոր-ազգային ինքնության պահպանման գործընթացում: Նրանք մարմնավորեցին այն սկզբունքը, ըստ որի՝ քրիստոնեական հավատքը հայ ժողովրդի համար ոչ միայն կրոնական պատկանելություն է, այլև ազգային ինքնագիտակցության հիմնասյուն: Ղևոնդյանց վկայությամբ հաստատվեց Հայոց Եկեղեցու պատմական առաքելությունը՝ լինել ոչ միայն հոգևոր կառույց, այլ նաև ազգային գոյապահպանության կրող:

— Ղևոնդյանց քահանաները ինչպե՞ս են ոգեշնչել հայոց զորքին Ավարայրի ճակատամարտում:

— Ղևոնդյանց քահանաները Ավարայրի ճակատամարտում հանդես եկան որպես հոգևոր առաջնորդներ՝ զորքին ներշնչելով հավատքի և զոհաբերության գիտակցություն: Նրանց քարոզչական և աղոթական ներկայությունը նպաստեց նրան, որ պայքարն ընկալվի ոչ միայն որպես ռազմական դիմակայություն, այլև որպես հավատքի և հոգևոր ազատության պաշտպանություն: Այդ ընկալումն էր, որ Ավարայրը վերածեց հոգևոր հաղթանակի՝ անկախ ռազմաքաղաքական արդյունքից:

— Գարեգին Նժդեհն ասում էր՝ Եկեղեցին Եկեղեցի՛ է իր նահատակներով, և չկա կյանքն ազգին և հայրենիքին պատարագելու չափ մեծ երջանկություն աշխարհում: Հայոց Եկեղեցին ազգային Եկեղեցի է, և «վասն հաւատոյ, վասն հայրենեաց» սրբազան գաղափարը նրան առաջնորդել է Ավարայրից ցայսօր: Ինչպե՞ս է Ղևոնդյանց կերպարը ներգործել հայ ապագա հոգևորականության գաղափարատիպի ձևավորման վրա:

— Ղևոնդյանց կերպարը էական ազդեցություն է ունեցել հայ հոգևորականության դասական տիպարի ձևավորման վրա: Հայոց Եկեղեցու ինքնընկալման մեջ հոգևորականը կոչված է ծառայելու ոչ միայն եկեղեցական միջավայրում, այլ նաև ազգային կյանքի վճռորոշ պահերին: «Վասն հաւատոյ, վասն հայրենեաց» գաղափարախոսությունը դարձավ հոգևոր ծառայության ազգային հիմք՝ սերնդեսերունդ փոխանցվելով որպես պարտավորություն և ուղենիշ:

— Հայտնի է, որ 44-օրյա պատերազմին մասնակցել են բանակում ծառայող գնդերեցները՝ նաև Դուք, և կամավորական հոգևորականները: Ինչպե՞ս եք գնահատում հոգևորականների դերը պատերազմում և խաղաղության ժամանակ՝ հայրենիքի և հավատքի պաշտպանության գործում:



— Պատերազմական պայմաններում հոգևորականության դերը դրսևորվում է զինվորի հոգեբանական և բարոյական կայունության ապահովման գործում: 44-օրյա պատերազմի ընթացքում գնդերեցներն ու կամավոր հոգևորականները իրականացրել են հոգևոր խնամք՝ գտնվելով զինվորի անմիջական միջավայրում: Խաղաղ ժամանակներում ևս այդ ծառայությունը կարևոր նշանակություն ունի բանակի ներքին դիմադրողականության և արժեհամակարգային կայունության պահպանման համար:

— Վարդանանց ճակատամարտը խորհրդանշում է քրիստոնեական հավատքի և ազգային ինքնության պաշտպանության միասնական պայքար: Ինչ զուգահեռներ եք տեսնում Արցախյան և Վարդանանց պատերազմների միջև:

— Վարդանանց և Արցախյան պատերազմների միջև հնարավոր է տեսնել էական գաղափարական ընդհանրություններ: Երկու դեպքում էլ հայ ժողովուրդը կանգնած է եղել ինքնության, արժեհամակարգի և գոյության պահպանման հիմնարար խնդրի առաջ: Թեպետ պատմական և քաղաքական համատեքստերը տարբեր են, սակայն պայքարի խորքային շարժառիթը նույնն է՝ հավատքի և ազգային ինքնության պաշտպանությունը արտաքին ճնշումների պայմաններում:

— Հայ հոգևորականության Ղևոնդյանց վարքի ուրիշ դրսևորումներ ևս հայտնի են պատմության ընթացքում՝ Ֆիդայական շարժման ժամանակ, Առաջին աշխարհամարտում, Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի հերոսամարտերում և այլուր: Ինչ խորհրդանշական դրվագներ կառանձնացնեք:

— Հայոց պատմության ընթացքում բազմիցս արձանագրվել են Ղևոնդյանց վարքի շարունակական դրսևորումներ: Ազատագրական շարժումների, Առաջին աշխարհամարտի և ազգային հերոսամարտերի ընթացքում հոգևորականությունը հանդես է եկել որպես ազգային դիմադրության գաղափարական և հոգևոր հենարան: Այդ դրվագները վկայում են, որ Հայոց Եկեղեցին պատմականորեն կիսել է իր ժողովրդի ճակատագիրը:

— «Անկրոն էակը հրաշունչ զինվոր չի դառնա»,— ասում էր Նժդեհը: Կպատմե՞ք որևէ դեպք Ձեր հոգևոր ծառայության ընթացքում, երբ հայ զինվորի կամ հավատացյալի ոգեշնչման մեջ զգացել եք նահատակների վարքի ազդեցությունը:

— Իմ հոգևոր ծառայության ընթացքում բազմիցս առիթ եմ ունեցել նկատելու, որ նահատակների օրինակն էական ազդեցություն է գործում զինվորի և հավատացյալի հոգևոր վիճակի վրա: Վարդանանց և Ղևոնդյանց հիշատակը հաճախ դառնում է ներքին զորացման աղբյուր՝ նպաստելով պատասխանատվության և զոհաբերության գիտակցման խորացմանը:

— Սույն թվականի հունվարի 29-ին՝ Հայոց բանակի տոնին հաջորդող օրը, ՀՀ պաշտպանության նախարար Ս. Պապիկյանի հրամանով լուծարվեց ՀՀ ԶՈՒ Հոգևոր ծառայությունը ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում: Ինչ բացասական հետևանքներ կարող է ունենալ դա Հայոց բանակի մարտունակության և բարոյահոգեբանական վիճակի վրա:

— Բանակում հոգևոր ծառայության դադարեցումը կարող է բացասաբար անդրադառնալ զինծառայողների բարոյահոգեբանական վիճակի վրա: Հոգևորականության ներկայությունը կարևոր գործոն է սթրեսային իրավիճակներում զինվորի ներքին հավասարակշռությունը պահպանելու համար: Այդ համակարգի բացակայությունը կարող է թուլացնել բանակի ներքին համախմբվածությունն ու արժեքային հիմքերը:

Բանակում գնդերեցների ծառայության լուծարումը չի կարող դիտարկվել միայն որպես վարչարարական կամ կառուցվածքային փոփոխություն: Այն ունի խորքային սոցիալ-հոգեբանական և արժեքային հետևանքներ, որոնք անհրաժեշտ է քննարկել առանց հուզականության, բայց նաև առանց ձևական ընդհանրացումների:

Առաջին հերթին պետք է արձանագրել, որ գնդերեցը բանակում դասական իմաստով հոգևորականից ավելի լայն դեր ունի: Նա ո՛չ հրամանատար է, ո՛չ վերահսկող, այլ միջնորդ՝ զինվորի և համակարգի միջև: Շատ դեպքերում հենց գնդերեցն է մասնակցել միջանձնային լարվածությունների մեղմմանը, ծառայության ընթացքում առաջացած բարոյահոգեբանական ճգնաժամերի հաղթահարմանը, զինվորի ներքին դիմադրողականության ամրապնդմանը: Նրա բացակայությունը կարող է հանգեցնել այն բանին, որ նման խնդիրները կամ կմնան չլուծված, կամ կփորձեն լուծվել բացառապես վարչական մեխանիզմներով, որոնք միշտ չէ, որ արդյունավետ են փակ ռազմական միջավայրում:

Երկրորդ կարևոր հանգամանքը բանակում առաջացող հոգևոր-արժեքային վակուումն է: Բանակը փակ ինստիտուտ է, որտեղ գաղափարական ու արժեքային դատարկությունը հազվադեպ է երկար պահպանվում: Պաշտոնական, վերահսկելի հոգևոր ներկայության բացակայության պայմաններում այդ վակուումը կարող է լցվել ոչ ինստիտուցիոնալ, անկառավարելի կրոնական ազդեցություններով: Խոսքը չի վերաբերում միայն զանգվածային երևույթներին. նույնիսկ առանձին դեպքերը կարող են ունենալ համակարգային հետևանքներ:

Այս համատեքստում առանձնակի ուշադրության է արժանի աղանդավորական խմբերի հնարավոր ակտիվացումը: Երբ բանակում չկա հաստատված և պետության կողմից վերահսկվող հոգևոր ծառայություն, վերահսկողությունը կրոնական ներգործությունների նկատմամբ դառնում է ոչ թե կանխարգելիչ, այլ ռեակտիվ: Սա կարող է ստեղծել պայմաններ փակ խմբային ազդեցությունների, ներքին պառակտումների և զինվորների գաղափարական մանիպուլյացիայի համար:

Բացի այդ՝ որոշ կրոնական հոսանքներ հայտնի են զինվորական ծառայության, զենք կրելու կամ ռազմական պարտականության նկատմամբ բացասական վերաբերմունքով: Եթե նման գաղափարները չվերահսկվեն, դրանք կարող են աստիճանաբար ձևավորել ծառայությունից խուսափելու, դասալքության կամ պարտազանցության բարոյական լեգիտիմացման գաղափարական հիմքեր: Այստեղ խոսքը ոչ թե անհատի հավատքի ազատության սահմանափակման, այլ բանակի գործունակության պահպանման մասին է:

Վերջապես, պետք է ընդգծել, որ հարցը չի վերաբերում միայն կրոնական գործոնին: Այն առնչվում է բանակի ներսում վստահության, հոգեբանական կայունության և ներքին համերաշխության համակարգին: Գնդերեցների ինստիտուտն այդ համակարգի բաղադրիչներից մեկն էր, և դրա վերացումը՝ առանց փոխարինող մեխանիզմների ներդրման, կարող է ստեղծել դժվար կանխատեսելի ռիսկեր:

Հետևաբար՝ գնդերեցների ծառայության լուծարումը պահանջում է ոչ թե լուռ ընդունում կամ մերժում, այլ խորքային մասնագիտական քննարկում՝ հաշվի առնելով բանակի առանձնահատկությունները և ազգային անվտանգության շահերը:

— Ինչ ազդեցություն կարող են ունենալ Ղևոնդյանց և Վարդանանց կերպարները երիտասարդ սերնդի հոգևոր և հայրենասիրական դաստիարակության վրա:

— Ղևոնդյանց և Վարդանանց կերպարները կարևոր դաստիարակչական նշանակություն ունեն երիտասարդ սերնդի համար: Նրանք ներկայացնում են հավատքի, ազգային պատասխանատվության և անձնազոհության ամբողջական օրինակ, որը կարող է նպաստել գիտակից քաղաքացիական և հայրենասիրական դիրքորոշման ձևավորմանը:

— Ինչ խորհուրդ կտաք հավատացյալներին՝ ներկայիս ռազմական մարտահրավերներին ու հոգևոր փորձություններին դիմակայելու համար:

— Ներկայիս մարտահրավերների պայմաններում հավատացյալներին խորհուրդ եմ տալիս պահպանել հոգևոր զգոնությունը, ամրապնդել հավատքը և մնալ ազգային ու եկեղեցական ինքնության շրջանակում: Պատմական փորձը ցույց է տալիս, որ հոգևոր ամրությունը վճռորոշ գործոն է թե՛ փորձությունների հաղթահարման, թե՛ ազգային վերականգնման ճանապարհին:

Հարցազրույցը՝
Անի ՆԱԶԱՐՅԱՆԻ

Սուրբ Ղևոնդ Երեցի կենսական և վերժամանակյա պատգամները

↩ էջ 4

Հիշատակելով Վարդանանց պատերազմը, հին և նոր հայ հոգևորականների օրինակները՝ այս ուսմունքը դառնում է ուղեցույց՝ հավատքի, անձնազոհության և ազգային ինքնության պաշտպանությունը նույն ոգով ապահովելու այսօր ևս:

Այսպիսով՝ Սուրբ Ղևոնդ Երեցի կենսական և վերժամանակյա պատգամները Վարդանանց սխրանքի խորապատկերում ներկայանում են որպես հայ քրիստոնեական ինքնագիտակցության և գոյաբանական ընտրության ամբողջական ուսմունք: Ղևոնդ Երեցը միայն պատմական դեմք կամ նահատակ քահանա չէ, այլ նաև իմաստուն առաջնորդ, որի խոսքը ծնվել է կյանքի և մահվան սահմանագծին և այդ պատճառով էլ անդրանցնում է իր ժամանակը: Ազատությունը նրա համար արտաքին պայմանների արդյունք չէ, այլ ներքին վիճակ՝ ճշմարտությանը հավատարիմ մնալու կարողություն: Նրա հիմնական պատգամը հաստատում է, որ հավատքը տեսություն չէ, այլ կենսաձև, իսկ մահը երբ ընդունվում է ճշմարտության և Քրիստոսի համար, դադարում է լինել կործանում և վերածվում է վկայության: Ղևոնդ Երեցի համար մահվան հաղթահարումն իրագործվում է ոչ թե մարմնի փրկությամբ, այլ հոգու՝ իր ընտրությանը հավատարիմ մնալով: Այս ընկալումն է, որ դարձավ Վարդանանց սխրանքի ներքին շարժիչը՝ փոխակերպելով պատմական բախումը հոգևոր հաղթանակի:

Վարդանանց պայքարի մեջ Ղևոնդ Երեցի պատգամները բացահայտում են հավատքի և ազգային ինքնության անբաժանելի միությունը: Նրա խոսքում հայրենիքը պաշտպանելը չի տարանջատվում Աստծուն հավատարմությունից: Ազգային գոյությունը դիտվում է որպես հոգևոր հանձնառություն, իսկ հոգևորականը՝ որպես այդ հանձնառության կենդանի կրող, որը կոչված է լինել ոչ միայն աղոթող, այլ նաև առաջնորդող, քաջալերող և անհրաժեշտության դեպքում՝ զոհվող:

Այսօր, երբ արժեքների խեղաթյուրումը, հոգևոր անտարբերությունն ու ինքնության մթագնումը կրկին մարտահրավեր են, Ղևոնդ Երեցի պատգամները շարունակում են հնչել որպես զգոնության կոչ: Դրանք հիշեցնում են, որ լույսը տեսնելը դեռ բավարար չէ, անհրաժեշտ է մնալ լույսի մեջ, չթուլանալ, չվհատվել և չզիջել այն բաժինը, որն Աստծուց է տրված:

Սուրբ Ղևոնդ Երեցի կյանքն ու խոսքը մեզ փոխանցում են մի պարզ, բայց կարևոր ճշմարտություն. ժողովուրդներն ապրում են այնքան ժամանակ, որքան ժամանակ հավատարիմ են իրենց հոգևոր ընտրությանը, և մահը կորցնում է իր իշխանությունն այնտեղ, որտեղ կյանքն ապրվում է հանուն Աստծու և ճշմարտության:

Նարեկ սրկ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՕՖԵԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ի՞նչ վտանգավոր հետևանքների կարող է հանգեցնել ՀՕՒ Հոգևոր ծառայության դադարեցումը

Հարցազրույց ՀՀ ՀՕՒ Հոգևոր առաջնորդի օգնական բարեշնորհ Հովհաննես սրկ. Ավետիսյանի հետ

– Հովհաննե՛ս սարկավագ, Պաշտպանության նախարար Ս. Պապիկյանի հայտնի հրամանով՝ դադարեցվեց ՀՀ ՀՕՒ Հոգևոր առաջնորդության գործունեությունը ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում: Որպես ՀՀ ՀՕՒ Հոգևոր առաջնորդի օգնական՝ ինչպե՞ս եք գնահատում քաղաքական ղեկավարության այդ քայլը ռազմաքաղաքական սպառնալիքներով պայթյունավտանգ տարածաշրջանային այս իրավիճակում, մանավանդ որ դեռևս մինչև վերջ չեն հաղթահարվել հետպատերազմյան հետևանքները՝ անվտանգային ու հոգեբանական առումով:

– Նախ ցանկանում եմ նշել, որ Հոգևոր ծառայությունը Հայոց բանակում գալիք տարի դառնալու էր 30 տարեկան, և այդ տարիների կուտակած փորձի ու անցած ճանապարհի ձեռքբերումների կորուստը մեզ համար նույնքան մտահոգիչ է, որքան մեր հոտին առանց հովվի թողնելը: Տարիներ շարունակ գնդերեցները բանակում ծառայել են ամբողջական նվիրումով՝ հիմնականում սահմանամերձ զորամասերում: Գնդերեցները թե՛ 2016 թ. քառօրյա, թե՛ 2020 թ. հուլիսյան, թե՛ 44-օրյա պատերազմներին, ինչպես նաև հետագա մարտական գործողությունների ընթացքում եղել են առաջնագծում՝ զինվորի և սպայի կողքին: Պատերազմից հետո էլ շարունակական աշխատանք են տարել թե՛ պատերազմում զոհված զինծառայողների ընտանիքների, թե՛ վիրավորված և հաշմանդամ դարձած զինծառայողների հետ, որոնց մասին պարբերաբար զեկուցվել է Պաշտպանության նախարարին և ԳՇ-ի պետին: Պատերազմից անմիջապես հետո գնդերեցներն առհելի աշխատանք են տարել զորամասերում, որպեսզի զինվորները և հատկապես նոր զորակոչվածները կարողանան պատվով և մարտական կայուն ոգով իրականացնել իրենց պատվաբեր ծառայությունը: Ուստի սա կորուստ է առաջին հերթին բանակի, սահմանին կանգնած զինվորի և սպայի համար, հետո՝ մեզ համար, որովհետև զինծառայողները մնում են առանց հոգևոր խնամքի:



– «Նա, ով ընդունում է Աստծո գոյությունը, ընդունում է նաև իր պարտականությունը հանդեպ գերագույն իրականության՝ ԱՀԳ, ՀԱՅՐԵՆԻՔ, ՊԵՏՈՒԹՅՈՒՆ»,– ասում էր Գարեգին Նժդեհը: Եկեղեցի–բանակ ճեղքվածքը, որն առաջացավ ՀՀ ՀՕՒ Հոգևոր առաջնորդության լուծարումից, ինչ վտանգավոր հետևանքների կարող է հանգեցնել Հայոց բանակի մարտունակության և դիմադրողականության ամրապնդման գործում:

– Մի բան հստակ է, որ բանակում զինվորը մնաց առանց իր լավագույն ընկերոջ, ամենավստահելի խորհրդատուի և իր հոգու կարիքները հոգացողի՝ հոգևոր ծնողի: Մեր գնդերեցները, Սուրբ Գրքի ճշմարտությունները քարոզելու հետ մեկտեղ, զինծառայողներին ուսուցանել են եղբայրասիրություն, ամուր կամք, քաջարի ոգի և այդ ամենը փաստել իրենց անձնական օրինակով: Գնդերեց քահանաներն ու սարկավագները իրենց զորամասերում եղել են մերօրյա Ղևոնդ Երեցներ, և պատահական չէ, որ շատերն իրենց նվիրյալ ծառայության համար արժանացել են բարձր գնահատանքի հրամանատարների կողմից, ինչպես նաև պարգևների ու գերատեսչական մեդալների՝ Պաշտպանության նախարարի կողմից:

– Բացասական հետևանքներ միանշանակ կանխատեսելի են նաև Զինված Ուժերի բարոյահոգեբանական վիճակի ուղղությամբ: Բարոյական ուժը, ինչպես հայտնի է, բանակին գոտեպնդող և հաղթանակների առաջնորդող հզոր գործոն է: Բացի այդ՝ պատերազմի ժամանակ զինվորը հոգևորականի ներկայությամբ իրեն Աստծո կողմից պաշտպանված է զգում: Հայ Եկեղեցու գնդերեցների բացակայության հետևանքով ինչ խնդիրներ բարձիթողի կմնան Հայոց բանակում:

– Գնդերեցները նպատակային աշխատում էին հատկապես այն զինծառայողների հետ, որոնք հակված էին բանակում ոչ կանոնագրքային բարքեր հաստատելուն, որը տեսել ենք, թե ինչ անդառնալի հետևանքների կարող է հանգեցնել: Գնդերեցներն աշխատել են առավել մեկուսացող զինծառայողների հետ, որպեսզի նրանք ավելի արագ ու հեշտ ինտեգրվեն ծառայությանը: Գնդերեցներն աշխատել են բռնարարքի մասնակից զինծառայողների հետ, կանխել են ինքնասպանություններ ու սպանություններ, որոնց մասին ժամանակին զեկուցվել է՝ ըստ վերադասության, և ի պատասխան՝ լսել ենք միայն դրվատանքի խոսքեր:

– Ակնհայտ է, որ կասկածի տակ է հայտնվում նաև Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ազգային-քրիստոնեական գաղափարաբանության և արժեհամակարգի քարոզչությունը բանակում: Աշխարահաքաղաքացիության (կոսմոպոլիտիզմ) և անկրոնականության, աղանդների և հերձվածների ներթափանցումը բաց տարածություն կարող է դառնալ անվերահսկելի, ինչը, անշուշտ, պետական անվտանգության սպառնալիքների կհանգեցնի: Ինչ բացասական զարգացումներ եք հնարավոր համարում այդ առումով:

–Մտահոգությունս է, որ Աստծուն փնտրող մարդիկ սխալ տեղում ու ձևով չգտնեն Նրան: Բազմաթիվ զորամասերում գնդերեցների ջանքերով կառուցվել են եկեղեցիներ ու մատուռներ՝ մեր զինծառայողների հոգևոր կյանքը զարգացնելու համար, և այս որոշմամբ՝ այդ եկեղեցիներն էլ են դատարկվելու՝ մնալով առանց հոգևորականի, առանց պատարագի ու աղոթքի, ինչը ցավ է ամենքիս համար: Այնպես չէ, որ գնդերեցությունը Հայ Առաքելական Եկեղեցին էր հորինել. կապելանությունը միջազգային եկեղեցական զարգացած ծառայություն է, և ինչ որ կատարվում է այսօր Հայոց բանակում, պարզապես քաղաքական նպատակ է հետապնդում՝ ցավալիորեն անտեսելով իր իսկ ենթակայության զինծառայողների հոգևոր կարիքները, շահն ու պահանջները:

– Քրիստոնությունը ոգեշունչ կրոն է, և հայտնի է խոսքի զորավոր իշխանությունը զինվորի, առհասարակ մարդու վրա: Հայ գնդերեցի բացակայությունը, անշուշտ, կարող է հանգեցնել նաև պատմության և ներկայի կապի խզման, ազգային-քրիստոնեական ոգու պատմության անտեսման: Գնդերեցը հոգևոր-հայրենասիրական այդ ոգու կենդանի ներկայությունն էր բանակում: Ավարայրից մինչև Սարդարապատ ու Արցախ հայ հոգևորականն ու զինվորականը թիկունք թիկունքի են եղել թե՛ կենաց ու մահու վճռական պահերին, թե՛ պաշտպանունակության կազմակերպման ժամանակ: Հայ հոգևորականության ոչպաշտոնական, կամավոր առաքելությունը ինչպե՞ս եք այսուհետ պատկերացնում Հայոց բանակում: Ի վերջո, «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց»՝ Հայ Եկեղեցին պարտավոր է որևէ ճանապարհով շարունակել իր առաքելությունը Հայոց բանակի հզորացման գործում:

– Մեզ արգելել են բանակում հոգևոր ծառայություն իրականացնել, բայց, բարեբախտաբար, զինծառայողներին դեռ չեն արգելել եկեղեցի գալ: Հիմա պարզապես համբերությամբ զինվել է պետք ու սպասել, մինչև այս փոթորիկները խաղաղվեն: Վստահ եմ, որ որոշ ժամանակ անց Հայոց բանակն իրապես կարիք է զգալու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից նշանակված իսկատիպ, հայրենասեր ու եկեղեցասեր գնդերեցների, և մենք վերադառնալու ենք բանակ՝ լինելու մեր զինվորի և մեր սպայի կողքին՝ մղելու նրանց նորանոր հաղթանակների:

Հարցազրույցը՝
Արփինե ԻՇԽԱՆՅԱՆԻ

Հանուն հավատքի պատերազմելու գաղափարը Սուրբ Գրքում

↩ էջ 5

Պատերազմի իմաստը որոշվում է ոչ թե հաղթանակի կամ պարտության փաստով, այլ Ժողովրդի՝ Աստծուն հավատարմությամբ: Այս ըմբռնումը քրիստոնեական աստվածաբանության հիմնասյուներից մեկն է և կարևոր նախադրյալ՝ Նոր Կտակարանում պատերազմի ամբողջական հոգևորացման համար:

Պատերազմի հոգևորացումը. «Տիրոջ պատերազմները»՝ որպես բարոյական պայքար: Սաղմոսաց և Իմաստության գրականության մեջ պատերազմին առնչվող լեզուն սկսում է ստանալ հոգևոր նրբերանգ: «Տերն իմ հաստատիչն է, // Իմ ապավենն ու իմ փրկիչը: // Աստված իմ օգնականն է, // Եվ ես հույսս Նրա վրա եմ դրել. // Իմ ապավենն է, // Իմ փրկության եղջյուրն ու ինձ ընդունողը» (Սաղմ. 17:3) հատվածը ցույց է տալիս, որ իրական պաշտպանությունը ֆիզիկական մահացու զենքը չէ, այլ Աստծո հետ կապը:

Այս փուլում պատերազմը դառնում է հոգու ներսում տիրող կենսավիճակ. արդարն ու ամբարիշտը, հավատն ու գայթակղությունը, ճշմարտությունն ու սուտը բախվում են մարդու ներսում: Այս ընկալումը հետագայում վճռորոշ է դառնում քրիստոնեական աստվածաբանության համար:

Հոգևորացման կամ ներքինացման գործընթացը սերտորեն առնչվում է իմաստության գրականության մարդաբանական հայեցակարգին, ըստ որի՝ մարդը դիտվում է ոչ միայն որպես պատմական կամ քաղաքական սուբյեկտ, այլև բարոյական պատասխանատվություն կրող անձ: Իմաստության գրքերում պատերազմական պատկերները հաճախ փոխակերպվում են խոհեմության և անմտության, արդարության և անօրենության հակադրության: Այստեղ հաղթանակն այլևս չի չափվում տարածքային նվաճումներով, այլ մարդու ներքին ամբողջականությամբ և Աստծո կամքին համապատասխան կյանքով: Այսպիսով՝ պատերազմը դառնում է ճանաչողական և բարոյական պայքար, որի առանցքը ճշմարիտ իմաստությունն է:

Այս զարգացումը կարելի է բնութագրել որպես աստվածաբանական դիսկուրսի խորհրդանշական փոխակերպում: Պատերազմական լեզուն չի վերանում, այլ վերաիմաստավորվում, ստանում է փոխաբերական ձև՝ հոգևոր իրականությունը նկարագրելու համար: Զենքը, ամրոցը, թշնամին և հաղթանակը ձեռք են բերում փոխաբերական նշանակություն՝ մատնանշելով մեղքի, կրքերի և հոգևոր խավարի դեմ մղվող պայքարը: Այս մոտեցումը թույլ է տալիս պահպանել ավանդական լեզվամտածողությունը՝ միաժամանակ խուսափելով բռնության սրբագործումից:

Հոգևոր տեսանկյունից «Տիրոջ պատերազմները» դառնում են ճգնավոր (ասկետիկ) կյանքի հիմնարար առանցք: Մարդը կոչվում է զգոնության, ինքնաքննության և ներքին պայքարի, որտեղ գլխավոր մարտադաշտը սիրտն է: Այս գաղափարը հետագայում խորապես զարգացվում է հայրաբանական գրականության մեջ, որտեղ հոգևոր պատերազմը ներկայացվում է որպես մշտական վիճակ՝ աղոթքի, խոնարհության և աստվածային շնորհի հետ համագործակցության պահանջով: Այստեղ հաղթանակը հնարավոր է միայն այն դեպքում, երբ մարդը հրաժարվում է ինքնաբավությունից և ամբողջովին ապավինում Աստծուն:

Երբ պատերազմն ընկալվում է որպես բարոյական և հոգևոր պայքար, այն նպաստում է խաղաղության, արդարության և հաշտության արժեքների առաջնայնությանը: Այսպիսով՝ Սաղմոսաց և իմաստութենական գրականության մեջ արդեն ձևավորված այս հայեցակարգը հանդես է գալիս որպես հակակշիռ պատմական բռնությանը՝ առաջարկելով աշխարհայացք, որտեղ իրական հաղթանակը մարդկային արժանապատվության պահպանումն է և Աստծո հետ կենդանի հարաբերության խորացումը:

Գաղափարաբանական այս մոտեցումն առավել ամբողջական է դառնում, երբ սուրբգրային տեղիները համադրում ենք տվյալ ժամանակաշրջանի փիլիսոփայական մտածողության վկայությունների հետ: Հին Ուխտում՝ Դավիթ մարգարեի սաղմոսներում, պատերազմի՝ ներքին և բարոյական իրողություն լինելու վերաբերյալ արդեն հստակ երևում է, որ պայքարը տեղափոխվում է մարդու սրտի խորքը՝ կրքերի և ինքնակառավարման հարթություն: Նույն ուղղությամբ է զարգանում նաև դասական փիլիսոփայական միտքը. Պլատոնը «Պետություն»-ում մարդու հոգին նկարագրում է որպես հակադիր ուժերի միջև մշտական լարում, որտեղ արդարությունը ձեռք է բերվում ներքին ներդաշնակության միջոցով, իսկ Արիստոտելը բարոյական առաքինությունը սահմանում է որպես կրքերի նկատմամբ բանականության հաղթանակ: Այս համադրությունը ցույց է տալիս, որ թե՛ աստվածաշնչյան, թե՛ փիլիսոփայական ավանդույթներում իրական պատերազմն ընկալվում է որպես մարդու ներսում ընթացող պայքար՝ ուղղված բարու գերակայությանը և ճշմարտության հաղթանակին:

Շարունակելի


Նարեկ սրկ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Օֆելյա ԳԱՍՊԱՐՅԱՆ

Պարույր Սևակի աբողջական կերպարը

Լույս է տեսել Դ. Գասպարյանի «Պարույր Սևակ: Կյանքը և ստեղծագործությունը» մենագրությունը

Գրքեր կան, որոնց լույսընծայումը հայտնության պես է, որովհետև էապես ոգեղեն արժեք են և թանկ նվաճում: Այդպիսի գրքերը նյութականացվող աշխարհում դառնում են ոգու հաց, հոգեկից ընկեր ու գրասեղանի զարդ: Այդպիսի գիրք է Դավիթ Գասպարյանի՝ վերջերս լույս տեսած «Պարույր Սևակ: Կյանքը և ստեղծագործությունը» մենագրությունը:

Դավիթ Գասպարյանը հայ քննադատության մեջ իր անհատականությունը հաստատած գրականագետ է, որի յուրաքանչյուր գիրք հայ գրական-մշակութային կյանքում իրադարձություն է և երևույթ: Ինչի և ում մասին գրում է նա, գրում է միմիայն իրեն ներհատուկ ոգով ու ոճով, գրական-քննադատական իր սկզբունքներով ու դավանանքով, ճշմարտության անսքող և անսովոր բացահայտումներով՝ դառնալով անխարդախ հոգեմիջնորդը տվյալ գրողի և ժամանակի ու ընթերցողի: Եվ դա հայ գրականության հնադարից մինչև նորագույն շրջան, Խորենացուց ու Նարեկացուց մինչև Տերյան ու Չարենց, Բակունց և Մահարի, Սայյան և Սևակ….



Ոչ բոլոր քննադատներին է ներհատուկ այն շնորհը, որով հասնում են գրական ստեղծագործության ոգու միջուկին, վերծանում անտեսանելիին ու անճանաչելիին: Գիտնականի համառություն է պետք նաև՝ գնալու փակ ու կողպված փաստերի և իրողությունների հետևից՝ շրջանցելով պայմանական ուղեփակոցները՝ հանուն ճշմարտության և հանուն գրականության:

Ստվարածավալ՝ 712 էջից բաղկացած «Պարույր Սևակ: Կյանքը և ստեղծագործությունը» մենագրությունը գրականագետի՝ տարիների ընթացքում գրած ուսումնասիրությունների համահավաք մատյանն է՝ որպես միասնական ամբողջություն: Գեղագիտական ու քննադատական խորատես հայացքով գրքում վերհանված է Պարույր Սևակի կյանքի ու ստեղծագործության համապատկերը՝ ընդգրկելով տեսանելի-անտեսանելի բոլոր շերտերն ու ենթաշերտերը: Այստեղ 20-րդ դարի ստեղծագործ մեծ անհատի կյանքն է՝ հոգևոր պատմության և ներանձնական կյանքի թանկ գաղտնիքների բացահայտումներով, ժամանակի հետ սուր ընդդիմախոսության ու պոետական բացարձակ սխրանքի վերարժևորումով, գեղարվեստական ստեղծագործության և քննադատական մտքի անչափելի ու չափելի պարագծերի հայտնաբերումներով:

Գրքի տիրույթում և՛ Պարույր Սևակի կյանքի ու գրական ճանապարհի բացահայտումն է, և՛ գեղարվեստի գիտությունը, և՛ պոեզիայի համապարփակ քննությունը, և՛ քննադատական մտքի ուղղությունների վերլուծությունը, և՛ բանարվեստի օրենսդիրի, ավանդույթի ու նորարարության սահմանադիրի որոշարկումը, և՛ Պարույր Սևակ գրական երևույթի վերծանումը:

Գիրքն ունի նաև հավելված, որը ժամանակակցի վկայությունն է՝ Պ. Սևակի դեմ հետապնդումների և նրա մահվան հանգամանքների վերաբերյալ:

Ուսումնասիրությունը պարունակում է հետևյալ գլուխներն ու ենթագլուխները: Նախ որպես ներածություն՝ իրար շարունակում են «Երկու խոսք», «Մուտք», «Մեծերի ժամանակը երբեք չի ավարտվում» բաժինները: Հաջորդում է առաջին գլուխը՝ «Բանաստեղծի ծնունդը», որը ներառում է «Կյանքի ուղին» և «Գրական մուտքը» ենթագլուխները: Տարողունակ է երկրորդ գլուխը՝ «Գեղարվեստի գիտությունը կամ՝ ինչ-ը, ինչպես-ը և որպես-ը», ուր քննության են առնվում հետևյալ հարցերը՝ գրական շրջադարձը և Պ. Սևակի գործունեությունը, ծրագրային պոեզիա կամ՝ ժամանակի շարժման և հոգու դիալեկտիկայի գեղարվեստական հայտնագործությունը, Պարույր Սևակը 1960-ականների գրական-գեղարվեստական համամիութենական տեսադաշտում:

Երրորդ գլուխն ամբողջովին բացահայտում է Սևակի պոեզիան և նրա քնարական հերոսին, որ ինքը՝ բանաստեղծն է՝ «Մարդը ինքն իր առջև», «Սիրո հավիտենական երգը», ««Ես չեմ ամաչում իմ սիրո համար». Պ. Սևակի կյանքի վեպը», «Միթե դա էր պատգամում Պարույր Սևակը», ««Եղիցի լույս» կամ՝ ժամանակի դիմակավորված ու ողբերգական դեմքը», «Հայրենիք կամ՝ պատմությունը և 20-րդ դարը», ««Քարտաշը» անտիպ պոեմը», «Պ. Սևակի ստեղծագործության պատմական նշանակությունը», «Պ. Սևակի ստեղծագործության գնահատության հարցի շուրջ»:

Չորրորդ գլխում՝ «Թռչող նետի ուղղությունը», վերլուծվում-բացահայտվում են Պ. Սևակի ստեղծագործական կապերը հայ ու համաշխարհային գրականության հետ՝ Նարեկացի, արևմտահայ գրականություն, Չարենց, Շեքսպիր, Մայակովսկի, Թոմաս Էլիոթ, լատինամերիկյան պոեզիա, Մեժելայտիս: Բաժինն ամփոփվում է Պարույր Սևակի թարգմանչական գործի վերարժևորմամբ:

Գրքի հինգերորդ գլուխն ընդգրկում է «Բանարվեստի օրենսդիրը», «Ավանդույթի և նորարարության սահմանը», «Տաղաչափությունը» բաժինները:

Վերջաբանում ընդհանրացվում է Պարույր Սևակ գրական երևույթը:

Ամեն ինչ այս աշխարհում ունի մարմին ու հոգի, և ինչպես գրականության, ընդհանրապես արվեստի համար կարևոր են միաժամանակ «ինչ»-ը և «ինչպես»-ը, այնպես էլ գրական քննադատության համար հավասարապես որոշիչ են բովանդակությունը և ձևը, նյութը և ոգին:

Դ. Գասպարյանի այս գիրքը, ինչպես նրա մյուս գրքերը, առանձնանշվում է նաև կենդանի, պատկերավոր ու ոգելից ոճով, որը յուրահատուկ փայլ է հաղորդում խոսքի գիտականությանն ու փաստական ճշգրտությանը: Գիրը կամ ոճը որքան գիտական է, նույնքան հոգևոր է, և ինչքան առարկայական է, նույնքան ոգեղեն է: Այո՛, քննադատությունն էլ պիտի ոգի ունենա, մտքի թև ու թռիչք, հակառակ պարագայում խոսքը դառնում է չոր ու անկենդան՝ վերապահված ոչ թե կենդանի կյանքին, այլ ավելի շատ՝ գիտական արխիվներին:

Հաճելի էր ինձ այս մենագրությունը խմբագրել՝ վերստին հաղորդակցվել Պարույր Սևակի բանաստեղծական աշխարհին ու պոետական կյանքի հոգևոր ընթացքին, որի անմիջնորդ խոստովանությունն է գիրքը՝ ուղղված բոլոր նրանց, ովքեր ուզում են իսկապես ճանաչել ու զգալ Պարույր Սևակին, ըստ էության հասկանալ ու գնահատել նրան:

Նարինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, բ. գ. թ.,
դոցենտ

Խրիմյան Հայրիկի կերպարը գրականության մեջ.

Ղազարոս Աղայան և Խրիմյան Հայրիկ

Մկրտիչ Խրիմյանի մասին ուշագրավ հուշագրություն է հեղինակել հայ գրող, մանկավարժ, հրապարակախոս Ղազարոս Աղայանը: Ժամանակին նա գործունեություն է վարել Մայր Աթոռում. 1869–1870 թթ. նա Ս. Էջմիածնի տպարանի կառավարիչն էր և խմբագրում էր Մայր Աթոռի «Արարատ» պաշտոնական ամսագիրը: Դասավանդել է նաև Ախալցխայի, Ալեքսանդրապոլի, Երևանի, Շուշիի դպրոցներում (1870–1882 թթ.), եղել Վրաստանի և Իմերեթիայի հայկական դպրոցների թեմական տեսուչ: Աղայանի «Իմ տեսակցությունը Խրիմյան Հայրիկի հետ» ուղեգրական ակնարկը տպագրվել է 1892 թ. «Մշակ» թերթում (մարտի 28-ի համարում), այնուհետև արտատպվել այլ պարբերականներում («Արձագանք», «Արմենիա» և այլն):

Դեռևս Վարագավանքի վանահայր եղած ժամանակ՝ 1861 թ. սկզբին, Խրիմյանը գալիս է Այսրկովկաս, այցելում Թիֆլիս, ապա՝ Հայաստան, լինում Սուրբ Էջմիածնում, Շուշիում և այլուր, միջոցներ հանգանակում Վարագավանքի ժառանգավորաց երկրագործական դպրոցի և «Արծուի Վասպուրական» պարբերականի կարիքների համար: Այդ օրերին Թիֆլիսում Խրիմյանի բոցաշունչ քարոզներով հիացած Աղայանը վկայում է, որ Խրիմյանի քարոզներով հմայված էր նաև Պերճ Պռոշյանը և գրի էր առնում նրա քարոզները:

1869–1870 թթ. Սուրբ Էջմիածնում Աղայանը ծանոթանում և սերտ բարեկամական փոխհարաբերություններ է հաստատում Մայր Աթոռի հեղինակավոր միաբան Արիստակես եպիսկոպոս Սեդրակյանի հետ: Աղայանն ու Սեդրակյանը հետագայում ավելի են մտերմանում Շուշիում, ուր Աղայանն ուսուցիչ էր (1878–1881 թթ.), իսկ Սեդրակյանը՝ Ղարաբաղի թեմի առաջնորդը (1876–1881 թթ.): Իրենց անմիջական հանդիպումների ու բազմամյա նամակագրության մեջ նրանք մտերմաբար, փոխադարձ վստահությամբ խորհրդածել են դպրոցական ու ազգային-հասարակական կյանքի բազմաթիվ հարցերի շուրջ: Մակար Կաթողիկոսի մահից (1891 թ.) հետո՝ մինչև Մկրտիչ Խրիմյանի Կաթողիկոս ընտրվելը, Արիստակես եպիսկոպոս Սեդրակյանը վճռական դերակատարություն է ունեցել Ս. Էջմիածնի միաբանության կյանքում: 1892 թ. Խրիմյանի հետ նա ևս համարվում էր կաթողիկոսական թեկնածու, բայց Արիստակես եպիսկոպոսը, ինչպես նաև Աղայանը, մշակյանների հետ միասին, համակարծիք էին Մկրտիչ Խրիմյանի թեկնածությանը: Հենց այդ առթիվ էլ, Արիստակես եպիսկոպոս Սեդրակյանի աջակցությամբ, Աղայանն ուղևորվում է Երուսաղեմ՝ հանդիպելու Խրիմյանի հետ, որին օսմանյան կառավարությունը 1890 թվականից արգելել էր Սուրբ երկիր և աչալրջորեն հետևում էր նրա յուրաքանչյուր քայլին:

Ժամանակի մամուլում Աղայանի արտասահմանյան այդ ուղևորությունը ներկայացվում է իբրև նրա՝ «վաղուց երազած ուխտագնացություն»: Բայց Աղայանի նամակագրությունից և «Իմ տեսակցությունը Խրիմյան Հայրիկի հետ» ակնարկից պարզվում է, որ «ուխտագնացություն» անվան տակ թուրքական ոստիկանությունից թաքցվում էր ուղևորության բուն նպատակը: Աղայանի ուղևորության բնույթը պարզող կարևոր վավերագրեր են նրա նամակները: Ուշագրավ են Աղայանի նամակներից մեկի հետևյալ տողերը. «Իմ հակառակորդները և նույնիսկ իմ համամիտները չեն թափանցել իմ բուն նպատակի մեջ, և այն, ինչ որ ինձ համար մի երկրորդական բան է, առիթ միայն, համարում են բուն նպատակս»:

1892 թ. հունվարի 20-ին Աղայանը Թիֆլիսից ճանապարհվում է Երուսաղեմ և փետրվարի 12-ին հասնում Յաֆա՝ պատմական Յոպպե քաղաքը. «Հենց որ մտա Յաֆայի հայոց վանքը, ուր սովորաբար հյուրընկալվում են Երուսաղեմ գնացող հայ ուխտավորները, այդտեղ վարդապետներից մեկը կարծես բնազդմամբ դեմս ելավ և ասաց.

— Գիտեք, Հայրիկը հոս է:

Մինչդեռ ես մտածում էի, թե երբ պետք է հասնեմ Երուսաղեմ և Հայրիկի տեսությանն արժանանամ, հանկարծ լսում եմ, որ ես արդեն Հայրիկի մոտ եմ: Արդյոք վարդապետն իմացա՞վ, որ ես ավելի Հայրիկի ուխտավոր եմ, քան Երուսաղեմի, կասկածեցի ես և սկսեցի ապշածի պես վարդապետի երեսին նայել....

Բարձրացա վերև և մտա մի սենյակ, ուր Հայրիկը նստած էր մի թախտի վրա և լրագիր էր կարդում: Ինձ որ տեսավ, լրագիրը մի կողմ ձգեց և իր վեհ պատկերով իմ կողմը դարձավ հայրական ուրախ ժպիտով: Ես կամացուկ մոտեցա Հայրիկին, չոքեցա առջևը, երկու ձեռքով բռնեցի սուրբ աջը և բոլոր գլխովս ծանրացա ծնկան վրա: Չգիտեմ՝ քանի վայրկյան տևեց, բայց ես ձեռքը բաց չթողեցի, և ոչ ինքը ջանք արավ ազատվելու իմ ձեռքիցս: Հայրիկի աջը ողողեցի հորդ արտասուքով, որ ինքն իրան աղբյուրացավ՝ բխելով ավելի կսկծալից, քան ուրախ սրտից:

Վերջապես Հայրիկը քաշեց ինձ և իր քովը նստեցրեց: Մի քանի րոպե լուռ էինք և իրար երեսի էինք նայում: Ես սաստիկ հուզված էի, չէի կարող խոսել, Հայրիկը նույնպես, բայց էլի նա ընդհատեց մեր լռությունը»:

Աղայանը հիշում է, որ Հայրիկի սեղանի վրա դրված էր «Ավետյաց երկրի Հրավիրակ»-ի երկրորդ հրատարակության սրբագրությունը: Հայրիկն ասաց, որ շատ բան է փոխվել երկրում, ու ինքը ևս պատրաստվում է փոփոխություններ և հավելումներ կատարել: Ապա ավելացրեց, որ փորձելու է տեսնել նաև՝ արդյո՞ք իր մեջ դեռ պահպանվել է երիտասարդության օրերի բանաստեղծական ունակությունը: Աղայանը կարդում է երկից մի քանի նոր կտոր և ասում, որ դրանք ոչ միայն հաջողված են, այլև գերազանցում են առաջին տպագրությունը: Հետագայում Խրիմյանի այդ երկը պատկերազարդ տպագրվում է Երուսաղեմում և վանքին մեծ եկամուտ բերում:

Աղայանը նշում է, որ Հայրիկը միայն այդ երկով չէր զբաղված. նա շարունակ գրում էր և առավելապես աշխատում էր իր պատմական հիշատակարանի վրա: Սուրճ խմելուց ու ծխելուց հետո նա Աղայանին հրավիրում է նախաճաշի և սկսում հարցեր տալ՝ հետաքրքրվելով աշխարհի անցուդարձի, բանաստեղծի հոգսերի ու մտահոգությունների, հայտնի մարդկանց, ինչպես նաև Թիֆլիսում տեղի ունեցած Ջրօրհնեքի աղետի մասին:

Շարունակելի

Արման ՄԱԼՈՅԱՆ, պ. գ. թ.

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային,
լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցե՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/
kristonya-hayastan
Ստոր. տպագր. 16.02.2026 թ.
Տպաքանակը՝ 1015